ԼՈՒՐ ՁՈՒՂԱ

ՏԵՂԵԿԱՏՈՒ ՍՊԱՀԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԺԳ ՏԱՐԻ ԹԻՒ 117 ՆՈՅԵՄԲԵՐ-ԴԵԿՏԵՄԲԵՐ 2016

ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ ՄԱՏԵԱՆ

ՀԱՅԱԼԵՅՈՒ ԱՌԱՋԻՆ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ 350-ԱՄԵԱԿ

ԱՄՍՏԵՐԴԱՄ 1666

ÐÆÜ î ²ðÆÜ Ø²Ð² ò ²ô, ÜàðÀ Ì ÜôºÒ

Նոր Տարեայ առիթով, ընդհանրապէս շատ յօդուածներ են գրւում համացանցերում կամ մամուլներում, որոնք ոգեւորում են կամ նոր գաղափարներով են հարստացնում մարդ արարածը, որոշելու թէ ինչպէս պէտք է լաւագոյնս անցնի Նոր տարին, ո՞ւր, որո՞նց հետ եւ կամ ի՞նչ նւէրներ պէտք է գնի՝ իր սիրելիներին ու շրջապատին գոհացնելու համար: Հակառակ այս բոլորին, քչերն են միայն գիտակցում, թէ Նոր Տարին այս բոլորից աւելի այնկողմ կամ աւելի վեր մի բան է, որով կարող ենք իմաստաւորել մեր կեանքը:

Իւրաքանչիւր տարեայ աւարտին, դեկտեմբերի 30-ի գիշերը կամ 31-ի առաւօտեան, մեր տան կամ գրասենեակի պատերին կախւած օրացոյցների վրայից պոկելով կամ ջնջելով վերջին թերթիկը, հիասթափւած կրկնում ենք նոյն զարմանքը. «Ինչքա՜ն շուտ անցաւ այս տարին»: Կաղանդի սեմին, մի ակնթարթի մէջ, այս հոգեկան բացականչութեան կողքին մեր մտքից անցնում է նաեւ մի մտածում, թէ այս տարին էլ անցաւ եւ նորը եկաւ: Սակայն մեզ համար այդ դէպքը կարելի է տեսնել այն պատկերացումով թէ՝ հին տարին մահացաւ եւ նրա փոխարէն նոր տարին ծնւեց: Շատերի համար ընդունւած այս բացատրութիւնը կաղապարում է իրենց մտքի ու հոգեբանական աշխարհի մէջ, սակայն հարցն այն է, թէ ինչպէս ենք դիտում, բայց մանաւանդ ինչպէս ենք ընդունում եւ ինչ ենք ակնկալում այդ բոլորից: Մեր խառնւածքը, նկարագիրը, բնաւորութիւնը, մտայնութիւնը, հոգեբանութիւնն ու մեր անձի կերպարը շատ մեծ դերակատարութիւն ունեն:

Այս բոլորի մէջ կարեւորագոյն հարցումը հետեւեալն է. «Կաղանդին հին տարեայ հետ ինչե՞ր մեռան մեր մէջ եւ նոր տարեայ հետ ինչե՞ր ծնւեցին մեր մէջ». մի հարցում, որ թերեւս քչերի մտքից է անցնում, որպէսզի ըստ այնմ գծեն նոր տարեայ իրենց գործունէութիւնների ու ծրագրերի մայր ուղին: Ամէն բանից առաջ, նախ հարց տանք մենք մեզ. «Արդեօք այս հարցումին լաւագոյնս կարո՞ղ ենք պատասխանել, եթէ ուշադրութեամբ դիտենք, քննենք ու զննենք մեր ներաշխարհը»:

Մեր կեանքերը զսպանակւած կամ խթանւած են մեր ներաշխարհից: Մարդ արարածն իր կեանքը վճռում եւ ուղղում է իր մտածումներով, գաղափարներով, բայց մանաւանդ իր հաւատալիքներով, այլ խօսքով՝ ամէն ինչ ծնունդ է առնում իր ներաշխարհի մէջ, եւ ապա նրանք դրսեւորում է իր կեանքի մէջ՝ վերածելով գործի եւ արդիւնաւորելով իր ճակատագիրը, իր դերակատարութիւնը եւ նոյնիսկ ազդելով իր շրջապատի վրայ կամ ընկերութեան մէջ: Եթէ ներաշխարհն է ամէն ինչի ծննդավայրը, ուրեմն շատ կարեւոր է հարցումը, թէ՝ «Հին տարեայ հետ ինչե՞ր մահացան եւ նոր տարեայ հետ ինչե՞ր ծնւեցին մեր մէջ»:

Բնականաբար, մարդկային ընկերութիւնը բաժանւում է զանազան խմբաւորումների: Կան դրական, չէզոք կամ եւ բացասական կամ ժխտական, թերեւս նաեւ այլեւայլ խմբաւորումներ: Եթէ մեր անձերը, որպէս պատեհապաշտ, յանձնենք պատահականութեան, մեր ներաշխարհի մէջ կարող է մի մեծ փոթորիկ սկիզբ առնել, եւ ընթացքը դառնայ անբաղձալի: Միթէ քի՞չ են նրանք, որոնց մէջ հին տարեայ հետ մեռնում են բազմաթիւ լաւ կէտեր եւ նրանց փոխարէն նոր տարեայ հետ ծնունդ են առնում մի շարք տգեղ կէտեր: Ուշադրութեամբ մենք մեզ փորձենք քննել, տեսնելու համար թէ արդեօք մենք պատկանո՞ւմ ենք այս խմբի մարդկանց, թէ այլ բան տեղի կունենայ մեր ներսում: Եթէ այս խմբին պատկանենք, նշանակում է թէ մարդկանց մէջ ամենից ողբալիներն ենք, իսկ եթէ մեր մէջ միայն հին ծրագրերն են մեռնում եւ նոր ծրագրեր ծնունդ առնում, նշանակում է թէ տեղքայլի մէջ ենք: Նպատակը այն է, որ զգոյշ պէտք է լինենք, որպէսզի մեր մէջ գտնւող հաւատքն ու յոյսը չմեռնի եւ նրանց փոխարէն ունայնութիւնը ծնունդ չառնի:

Նոր տարեայ նախօրեակին կանգնած, փորձենք ոչ միայն դիտել մեր կեանքի անցեալն ու ընթացքը, այլ մանաւանդ մեր ճիգերով, բայց մանաւանդ մեր անշեղ որոշումներով ու անյետադարձ կամքով ընտրել, թէ ի՛նչ ենք մեռցնելու մեր մէջ հին տարեայ հետ ու ինչի՛ն ենք ծնունդ տալու նոր տարեայ հետ: Եթէ փափագում ենք լաւագոյն արդիւնքների հասնել, ուրեմն նախ մեր մէջ բունկեցնենք ու վառ պահենք մեր հաւատքն ու յոյսը, որ գուցէ շիջանուտ է, եւ ապա, հին տարեայ հետ, մեր մէջ սպանենք չարը, վատը, մոլութիւններն ու մեղքերը, եւ նրանց փոխարէն նոր տարեայ հետ մեր մէջ յարութիւն տանք բարիին, լաւին, առաքինութիւններին ու բարեգործութեանը, որպէսզի սրբագրենք մեր անցեալը, նոր մարդ դառնանք, եւ լուսաւոր կաղանդի դիմաւորութեամբ ընթանանք դէպի մարդկային տիպար կերպարը, այն գոհունակութեամբ թէ՝ մեռաւ մեր մէջ հին մարդը եւ նրա փոխարէն ծնունդ առաւ աստուածահաճոյ նոր մարդ:

Սիփան Ծ. Վրդ. Քէչէճեան
Կաթողիկոսական Փոխանորդ
Սպահանի Հայոց Թեմի

ԴԱՆԻԱՅԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ Ս. ԱՄԵՆԱՓՐԿՉԵԱՆ ՎԱՆՔՈՒՄ

Շաբաթ՝ 2016 թուականի նոյեմբերի 2-ի առաւօտեան ժամը 11-ին Ս. Ամենափրկչեան վանք ներկայացաւ Դանիայի խորհրդարանի արտաքին քաղաքականութեան յանձնաժողովի պետ Սուրէն Սպերսոնի գլխաւորութեամբ խորհրդարանի ու դանիական զանազան կուսակցութիւնների ներկայացուցիչներից կազմուած մի պատուիրակութիւն: Խումբն այցելեց «Ս. Յովսէփ Արեմաթացի» եկեղեցի եւ «Խաչատուր Կեսարացի»-ի անուան թանգարան:

Աւելի ուշ՝ ժամը 13:30-ին, պատուիրակութիւնը Ս. Ա. Վանքի Ծաղկեայ դահլիճում հանդիպում ունեցաւ Սպահանի հայոց թեմի կաթողիկոսական փոխանորդ գերպ. Տ. Սիփան Ծ. վրդ. Քէչէճեանի, Իրանի Իսլամական խորհրդարանում Սպահանի եւ հարաւային իրանահայութեան պատգամաւոր պրն. Ժորժիկ Աբրահամեանի եւ Թեմական խորհրդի անդամների հետ:

Հանդիպման սկզբում պրն. Ժորժ Աբրահամեանը ծանօթացրեց հիւրընկալ անձնակազմին՝ ազգային իշխանութեան պատասխանատուներին, որից յետոյ դանիացի պատուիրակութեան անդամներն առանձնաբար ներկայացրին իրենց՝ զբաղեցրած պաշտօններով հանդերձ: Պրն. Սպերսոնը հակիրճ կերպով ներկայացրեց պատուիրակութեան Իրան ճամբորդելու նպատակը, եւ այն, որ ցանկացել են այցի ընթացքում հանդիպումներ ունենալ կրօնական փոքրամասնութիւնների պատասխանատուների հետ:

Պրն. Աբրահամեանը կրօնական փոքրամասնութիւններին առընչուող երկրում տիրող կացութեան մասին ընդհանուր բացատրութիւններ ներկայացրեց եւ Իրանում առկայ դժուարութիւնները չհերքելով հանդերձ՝ շեշտեց, որ արեւմուտքում տարածուած մտայնութիւնը Իրանի մասին շատ հաճախ ճիշտ պատկեր չի ներկայացնում:

Դանիացի պատուիրակութեան անդամների կողմից հարցումներ հնչեցին մարդկային իրաւունքի, ազգային-կրօնական փոքրամասնութիւնների, հայ համայնքի մշակութային, եկեղեցական եւ այլ խնդիրների շուրջ, որոնց ըստ պատշաճի պատասխանեցին կաթողիկոսական փոխանորդ գերպ. Տ. Սիփան Ծ. վրդ. Քէչէճեանը, պրն. Ժորժ Աբրահամեանը եւ Թեմական խորհրդի ատանապետ եւ անդամ պրնյք. Վրէժ Տէր-Մարտիրոսեանը եւ Վաչիկ Հայրապետեանը:

Հանդիպման աւարտին դանիացի պատուիրակութեան կողմից յուշանուէրներ յանձնուեցին գերպ. Հայր Սուրբին եւ պրն. Աբրահամեանին:

ԹԵՄԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՓՈԽԱՆՈՐԴ ԳԵՐՊ. Տ. ՍԻՓԱՆ Ծ. ՎՐԴ. ՔԷՉԷՃԵԱՆԻ ԱՅՑԸ ՓԵՐԻՈՅ ԿՐԹԱՍԻՐԱՑ ԵՒ ՀԱՅ ՈՒՍ. ՉՀԱՐՄԱՀԱԼ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱՏԵՂԻ

Թեմիս ազգային հաստատութիւններ այցելութեան շրջագծում, 2016 թուականի նոյեմբերի 2-ի երեկոյեան, Սպահանի հայոց թեմի կաթողիկոսական փոխանորդ գերպ. Տ. Սիփան Ծ. վրդ. Քէչէճեանը համատեղ հանդիպում ունեցաւ Փերիոյ կրթասիրաց միութեան կենտրոնական վարչութեան եւ Հայ ուս. Չհարմահալ միութեան Նոր Ջուղայի մասնաճիւղի վարչութեան անդամների հետ՝ զոյգ միութիւններին յատկացուած կենտրոնատեղիում:

Հանդիպման ընթացքում զրոյց ծաւալուեց երկու միութիւնների առաքելութեան, իրականացրած աշխատանքների եւ յետագայ ծրագրերի շուրջ, որի արդիւնքում գերպ. Հայր Սուրբն առաւել ծանօթացաւ սոյն հաստատութիւնների կառոյցին, անցեալին ու ապագայ գործունէութեանը:

Վերջում տեղի ունեցաւ համեստ հիւրասիրութիւն:

ՍՊԱՀԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԿՐԹԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԹԵՄԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՓՈԽԱՆՈՐԴ ԳԵՐՊ. Տ. ՍԻՓԱՆ Ծ. ՎՐԴ. ՔԷՉԷՃԵԱՆԻ ՀԵՏ

Շաբաթ՝ նոյեմբերի 5-ի երեկոյեան, Սպահանի հայոց թեմի Կրթական խորհրդի կազմը նախօրօք ժամադրութեամբ ծանօթացման հանդիպում ունեցաւ թեմի կաթողիկոսական փոխանորդ գերպ. Տ. Սիփան Ծ. վրդ. Քէչէճեանի հետ: Հանդիպմանը ներկայ էր նաեւ Թեմական խորհրդի կողմից Կրթական խորհրդի հետ նշանակուած կապ դկտ. Վաչիկ Հայրապետեանը:

Սկզբում Կրթական խորհրդի անունից ողջոյնի խօսք արտայայտեց ատենապետուհի Սաթենիկ Աւետումեանը, բարի գալուստ յայտնելով եւ շնորհաւորելով գերպ. Հայր Սուրբին՝ թեմի կաթողիկոսական փոխանորդի պաշտօնում նշանակուելու կապակցութեամբ:

Այնուհետեւ բացատրութիւններ տրուեցին Կրթական խորհրդի գործունէութեան սահմանների եւ բնոյթի մասին, անդրադարձ եղաւ հայոց դպրոցների ընդհանուր իրավիճակին ու խնդիրներին, յատկապէս նշուեց Շահինշահիր եւ Նոր Ջուղայի աշակերտութեան թի նւազման հետեւանքով դպրոցներում կատարուած դասաւորութիւններն ու մտահոգութիւնները, նաեւ այդ շրջագծում Ուսումնա-դաստիարակութեան հիմնարկի հետ փոխյարաբերութիւններն ու խորհրդի կողմից ներկայացուած առաջարկները եւ նախատեսուած ծրագրերը:

Գերպ. Տ. Սիփան Ծ. վրդ. Քէչէճեանն ուշի-ուշով ականջալուր եղաւ փոխանցուած բացատրութիւններին, եւ կարեւորելով հայոց դպրոցների խնդիրները, իր հերթին մի շարք լուծումներ ներկայացրեց դրանց կապակցութեամբ: Հանդիպման շարունակութեան մէջ խօսակցութիւն ծաւալուեց «Կրօն» առարկայի դասագրքերի մշակման եւ հրատարակութեան շուրջ ու գործնական համադրութիւններ եւ դասաւորութիւններ կատարուեցին այդ ուղղութեամբ:

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ ԱՅՑ ՍՊԱՀԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻՆ ԵՒ ՈՒՐԲԱԹՕՐԵԱՅ ԱՂՕԹԱՊԵՏԻՆ

Սպահանի հայոց թեմի կաթողիկոսական փոխանորդ գերպ. Տ. Սիփան Ծ. վրդ. Քէչէճեանը ընկերակցութեամբ Պատգամաւորական ժողովի դիւանի, Թեմական եւ Կրօնական խորհուրդների ատենապետերի՝ պրնյք. Վարուժ Մինասեանի, Վրէժ Տէր-Մարտիրոսեանի եւ Վարուժ Մովսիսեանի, երեքշաբթի՝ 2016 թւականի նոյեմբերի 22-ի առաւօտեան ժամը 10:00-ին այցելեց Սպահանի քաղաքապետ դկտ. Ջամալինեժադին:

Ծանօթացման այս անդրանիկ հանդիպման սկզբում, գերպ. Հայր Սուրբն իր ուրախութիւնը յայտնեց այցելութեան համար եւ քաղաքապետին փոխանցեց Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Վեհափառ Հայրապետի եւ Թեմիս նախորդ առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն արք. Զարեանի ողջոյնի խօսքերը, ապա յատուկ կերպով գնահատեց քաղաքապետարանի տնօրինութեանն ու ամբողջ աշխատակազմին՝ առկայ բոլոր դժուարութիւններով հանդերձ, քաղաքի գեղեցկութեան եւ զարգացման ուղղութեամբ իրենց լաւագոյնը կատարելու եւ գնահատելի արդիւնք ապահովելու համար: Կաթողիկոսական փոխանորդը շնորհակալութիւն յայտնելով ազգային իշխանութեան հետ քաղաքապետարանի ցուցաբերած դրական համագործակցութեան համար, վստա-

հեցրեց, որ ինչպէս միշտ, քաղաքի պայծառացման եւ վերելքի ուղղութեամբ հայ համայնքը դրսեւորելու է ամբողջական աջակցութիւն:



Դկտ. Ջամալինեժադը ընդհանուր տեղեկութիւններ փոխանցելով Սպահան քաղաքի եւ քաղաքապետարանի գործունէութեան ոլորտների մասին, շեշտեց, որ իր ղեկավարած հաստատութիւնը ամէն ճիգ ի գործ դնում է, որպէսզի հաւասար եւ անաչառ կերպով վերահասու լինի Սպահանում ապրող բոլոր խաւերին: Նա Իրան-Հայաստան, Սպահան-Երեւան գործակցութեան զարգացման համար քաղաքապետարանի որդեգրած քաղաքականութեանն ակնարկելով՝ հայ համայնքի դերը այս կապակցութեամբ ճակատագրական եւ անհրաժեշտ համարեց: Պրն. քաղաքապետը ակնակրելով տարածաշրջանում տիրող պատերազմական կարգավիճակին, Իրանը անւանեց խաղաղութեան կղզի, որը պատճառ է դարձել ականատես լինել զբօսաշրջիկների թւի աճին:

Նոյն օրը, առաւօտեան ժամը 11:00-ին, առաջնորդարանի պատւիրակութիւնն այցելեց Սպահանի ուրբաթօրեայ աղօթապետ հոջ. այաթ. Թաբաթաբայի-նեժադին: Քրիստոնեայ եւ իսլամ կրօնի ներկայացուցիչները ծանօթանալով միմեանց եւ ողջոյնի խօսքեր փոխանակելով, իրենց զրոյցի առանցքը դարձրին միաստուածեան կրօնների հետեւորդների համակեցութեան եւ խաղաղ գոյակցութեան պահպանման անհրաժեշտութիւնը:

Հանդիպման աւարտին պատւիրակութիւնը հրաւիրեց Սպահանի աղօթապետին մի օր այցելելու ազգային առաջնորդարան:

Ս. ԱՄԵՆԱՓՐԿՉԵԱՆ ՎԱՆՔԻ «Ս. ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ» ԳՐԱԴԱՐԱՆ-ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆՆ ԻՐ ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆԸ ՍԵՒԵՌԵՑ ՄԱՏԱՂ ՍԵՐՆԴԻ ՎՐԱՅ

Ս. Ամենափրկչեան վանքի «Ս. Ներսէս Շնորհալի» գրադարան-մատենադարանի հիմնադրման 110-ամեակի յոբելեանական յանձնախումբն իր նախաձեռնած միջոցառումների շրջագծում, այս անգամ տարրական դպրոցի աշակերտութեան համար կազմակերպեց ընթերցանութեան մրցոյթ-միջոցառումներ՝ հիմնականում նպատակ ունենալով մատաղ սերնդի սէրը հայերէն ընթերցանութեան նկատմամբ բարձրացնելու եւ հայ գրականութեան թանկագին գոհարներին նրանց առաւել ծանօթացնելու:

Ընթերցանութեան մրցոյթ-միջոցառումները կազմակերպւել էին յոբելեար գրադարանում՝ Նոր Ջուղայի «Արմէն» երկսեռ տարրական դպրոցի առաջինից չորրորդ դասարանների սաների մասնակցութեամբ: Իւրաքանչիւր դասարանի աշակերտներին ուղեկցում էր պատկան ուսուցչուհին:

Առաջին, երկրորդ եւ երրորդ դասարանցիների համար՝ դեկտեմբերի 1-ին, առանձնաբար տեղի ունեցան երեք ոչ մրցութային ընթերցանութեան միջոցառումներ, որտեղ նրանք խմբական ձեւով ներկայացրին իրենց նախօրօք տրւած մանկական գրականութիւնից արձակ ու չափածոյ նիւթերը: Առաջին եւ երկրորդ դասարանների սաներն անգիր ասմունքեցին Յովհաննէս Թումա-

նեանի «Ծունն ու կատուն» չափածոյ հեքիաթը, իսկ երրորդի աշակերտները՝ ընթերցեցին Ղազարոս Աղայեանի՝ «Գիլնազ տատի հեքիաթը» եւ «Ծառերի գանգատը»: Միջոցառման ընթացքում երեխաներն իրենց տրուած հեքիաթները նկատի առնելով՝ պատրաստեցին օրիգամի աշխատանքներ, իսկ քանի որ երրորդ դասարանցիների հեքիաթը բնապահպանութեան մասին էր, նրանք դիտեցին նաեւ այս թեմային առնչւող մուլտֆիլմ:

Այս շրջագծում դեկտեմբերի 3-ի երեկոյեան կայացաւ չորրորդ դասարանի համար նախատեսուած ընթերցանութեան մրցոյթը՝ ուսուցչուհի Ռայա Խուդավերդեանի եւ Թովմա Գալստանեանի իրաւարարութեամբ: Սոյն բաժնի ընթերցանութեան նիւթերը «Ուս-ուսի որ տանք՝ սարեր շուռ կը տանք» եւ «Առիւծը, աղուէսն ու մուկը» առակներն էին, որոնք նախապէս տրուել էին մասնակիցներին: Իրաւարար կազմը մասնակիցների ելոյթը գնահատեց նկատի առնելով՝ սահուն ընթերցելը եւ յոյզերի ճիշտ փոխանցելը:

Ծարունակութեան մէջ տեղի ունեցաւ նաեւ գրաւոր մրցոյթ, որտեղ երեխաները պատասխանեցին նոյն առակների շուրջ հարցերին:

Բանաւոր եւ գրաւոր մրցոյթների արդիւնքների ամփոփումից յետոյ լաւագոյնը ճանաչուեցին Էմմի Մկրտչեանն ու Վահագն Մինասեանը՝ ստանալով զոյգ մրցոյթների ամբողջ միաւորները, իսկ մինչեւ այդ խումբը պատրաստեց թեմային համահունչ օրիգամի աշխատանքներ:

Մասնակիցների գնահատումը կայացաւ դեկտեմբերի 5-ին, պատկան դպրոցում, որտեղ բոլորին տրուեցին գնահատագրեր ու յուշանուէրներ, իսկ մրցութային բաժնի յաղթողներին՝ պարգեւներ:

Նշելի է, որ ընթերցանութեան մրցոյթը կազմակերպուելու է նաեւ տարրական դպրոցի 5-րդ եւ 6-րդ դասարանների համար՝ 2017 թւականի սկզբին:

ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍ՝ ՆԻՒՐԻԱԾ Ս. ԱՄԵՆԱՓՐԿՉԵԱՆ ՎԱՆՔԻ «Ս. ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ» ԳՐԱԴԱՐԱՆ-ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 110-ԱՄԵԱԿԻՆ

Նախաձեռնութեամբ Ս. Ամենափրկչեան վանքի «Ս. Ներսէս Շնորհալի» գրադարան-մատենադարանի հիմնադրման 110-ամեակի յանձնախմբի, որպէս յոբելեանական միջոցառումների եզրափակիչ ծրագիր, նոյն գրադարան-մատենադարանի շէնքում կազմակերպուեց ցուցահանդէս, ուր հանրութեանը ներկայացուել էին գրադարանի գրքային պահոցում առկայ հայերէն ու օտարլեզու գրքերից, ինչու չէ նաեւ արխիւային նիւթերից եզակի նմուշներ:

Մէկ շաբաթ տեւողութեամբ այս ցուցահանդէսի բացումը տեղի ունեցաւ չորեքշաբթի՝ դեկտեմբերի 14-ի առաւօտեան, ներկայութեամբ Սպահան քաղաքի ընդանուր քաղաքապետ դոկտ. Ջամալինեժադի, Սպահան քաղաքի 5-րդ շրջանի քաղաքապետ պրն. Ֆառ-

հանգի, թեմի ազգային մարմինների ներկայացուցիչների, քաղաքապետարանի Կենտրոնական գրադարանի պատասխանատուի, Սպահանի Պետական եւ Արուեստի զոյգ համալսարանների գրադարանապետերի, հայոց ազգային դպրոցների ու միութիւնների ներկայացուցիչների, այլ հիւրերի եւ համայնքի ժողովրդի:

Պաշտօնական բացումը կատարուեց ընդանուր քաղաքապետ դոկտ. Ջամալինեժադի եւ Թեմական խորհրդի ատենապետ Վրէժ Տէր-Մարտիրոսեանի ձեռամբ՝ խորհրդանշական ժապաւէնի յատումով:

Այնուհետեւ հիւրերին ողջունեց յոբելեանական յանձնախմբի անդամ Կարին Տէր-Մարտիրոսեանը, ով ներկայացնելով ցուցահանդէսի կազմակերպման նպատակը, ընդգծեց՝ ցուցադրուածները միայն նմուշներ են այն մեծ ու թանկարժէք գանձարանից, որը գտնուում է Ս. Ա. վանքի գրադարան-մատենադարանում: Նա յաւելեց նաեւ, որ սոյն ցուցահանդէսը ճամբորդութիւն է պատմութեան գրկում. մի պատմութիւն, որի իւրաքանչիւր էջը փաստում է, թէ իրանեան հողը որքան արգասաբեր է եղել հայերի համար:

Բացման խօսքից յետոյ ներկաներն առիթ ունեցան ծանօթանալու ցուցադրուած գրքերին ու նիւթերին, իսկ յաւելեալ բացատրութիւններն ու իրենց յուզող հարցերի պատասխաններն ստացան «Ս. Ներսէս Շնորհալի» գրադարանի գրադարանապետ Վերգինէ Միրզախանեանից:

Սոյն ցուցահանդէսն արժանացաւ այցելուների եւ տեղական լրատուամիջոցների լայն ուշադրութեանը:

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՓՈԽԱՆՈՐԴԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱՅՑԸ ՍՊԱՀԱՆԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻՆ

Սպահանի հայոց թեմի կաթողիկոսական փոխանորդ գերպ. Տ. Սիփան Ծ. վրդ. Քէչէճեանը ընկերակցութեամբ Թեմական եւ Կրօնական խորհուրդների ատենապետեր՝ պրնչք. Վրէժ Տէր-Մարտիրոսեանի եւ Վարուժ Մովսիսեանի, կիրակի՝ 2016 թւականի դեկտեմբերի 25-ի ժամը 14:30-ին, այցելեց Սպահանի նահանգապետ դկտ. Ռասուլ Զառգառփուռին:

Հանդիպմանը ներկայ էին Իսլամական մշակոյթի եւ առաջնորդութեան Սպահանի գերատեսչութեան տնօրէն եւ Միաստուածեան կրօնների գրասենեակի պատասխանատու հոջ. դկտ. Հաբիբ-Ռեզա Առզանին եւ Մշակութային ժառանգութեան, ձեռարուեստի եւ զբօսաշրջութեան հիմնարկի գլխաւոր տնօրէն պրն. Ֆեռէյդուն Ալլահեւառին:

Հանդիպման սկզբում, նահանգապետն ուրախութեամբ ողջունեց պատուիրակութեանը եւ շեշտելով, որ նահանգապետարան-առաջնորդարան յարաբերութիւնները մինչեւ այժմ եղել են սերտ եւ բարեկամական, յոյս յայտնեց, որ ապագայում առաւել եւս ամրանալու եւ մտերմանալու են գործակցութիւններն ու կապերը:

Գերպ. Հայր Սուրբն իր ուրախութիւնը յայտնեց այցելութեան համար, շնորհակալութիւն յայտնեց ընձեռած առիթի կապակցութեամբ եւ նահանգապետին փոխանցեց Մեծի Տանն Կիլիկիոյ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Կաթողիկոսի եւ

Թեմիս նախորդ առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն արք. Զարեանի ողջոյնները: Կաթողիկոսական փոխանորդը մաղթեց, որ Աստուած քաղաքի եւ նահանգի պատասխանատուներին առաւել զօրացնի, որպէսզի կարողանան իրենց ուսերին դրուած ծանր պարտականութիւնը՝ Սպահանը առաւել զարգացնելու եւ նրա բազմակրօն բնակչութեան միջեւ գոյութիւն ունեցող խաղաղ համագոյակցութիւնը պահպանելու ուղղութեամբ, լաւագոյնս վարել:

Հանդիպման աւարտին նահանգապետը յուշանուէրներ յանձնեց գերպ. Հայր Սուրբին:

ՀԱՅ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՄԵԾԱՐՄԱՆ ԵՐԵԿՈՅ՝ ՍՊԱՀԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԿՐԹԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹԵԱՄԲ

Կրթութեան եւ լուսաւորութեան մշակ հայ ուսուցչին գնահատելու նպատակով, Սպահանի հայոց թեմի Կրթական խորհրդի նախաձեռնութեամբ, չորեքշաբթի՝ հոկտեմբերի 16-ի երեկոյեան, Նոր Ջուղայի հայոց ազգ. կրթահամալիրի «Ալենուշ Տէրեան» դահլիճում տեղի ունեցաւ մեծարման երեկոյ: Միջոցառմանը հրաւիրուել եւ ներկայ էին՝ թեմի կաթողիկոսական փոխանորդ գերպ. Տ. Սիփան Ծ. վրդ. Քէչէճեանը, Շահինշահրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ գերպ. Տ. Անանիա Ծ. վրդ. Գուճանեանը, քահանայից դասի, ազգային մարմինների, շրջանի Հայ Դատի յանձնախմբի եւ դպրոցների ծնողական խորհուրդների ներկայացուցիչներն ու Նոր Ջուղայի եւ Շահինշահրի հայոց ազգ. դպրոցների հանգստի կոչուած ու աշխատող հայ տեսուչները, ուսուցիչները եւ գրասենեակների պատասխանատուները՝ իրենց պարագաներով:

Ծրագրի մեկնարկը տրուեց Կրթական խորհրդի անդամ եւ երեկոյի հանդիսավար Ադրինէ Ստեփանեանի ողջոյնի խօսքով: Ապա Կրթական խորհրդի խօսքն ընթերցուեց ատենապետուհի Սաթենիկ Աւետումեանի միջոցով:

Ահա մի հատուածի մէջբերում խորհրդի խօսքից.

«Հայ ուսուցչի տօնը որքան էլ հաճելի, նոյնքան էլ պարտաւորեցնող է, քանզի հայ ուսուցչի ուսերին է ծանրացած հայ տեսակի շարունակութեան եւ զօրացման պատասխանատու գործը: Կրթութեան միջոցով է, որ մեզ կը յաջողուի հասնել մեր ազգային իղձերին եւ նպատակներին, որի պահանջը մենք զգում ենք ամէն օր, թէ՛ հայրենիքում եւ թէ՛ սփիւռքում: Սիրելի ուսուցիչներ ու կրթութեան մշակներ, ձեր ամենօրեայ աշխատանքով ու օրինակով, փորձէք հաստատել ձեր անհատականութիւնը եւ հաւատարիմ մնալ արդի քաղաքակրթական արժէքներին, ազգային աւանդոյթներին ու ժամանակակից մօտեցումներին»:

Ելոյթների շարանում արտայայտուեց նաեւ Թեմական խորհրդի ատենապետ Վրէժ Տէր-Մարտիրոսեանը, ով փոխանցելով մարմնի ջերմ շնորհաւորանքները առիթի կապակցութեամբ, ընդգծեց, որ ուսուցչի գործը առաքելութիւն է եւ ուսուցիչը ոչ միայն մարդակերտման, այլեւ ազգակերտման պարտականութիւնն ունի: Նա իր խօսքի մի այլ բաժնում յայտնելով, որ հայ ժողովուրդը բախտաւոր ազգ է, քանզի ունի երկու ուսուցչապետեր, կարեւորութեամբ անդրադարձաւ հոգեւոր ուսուցչապետ Յիսուս Քրիստոսի եւ ազգային ուսուցչապետ Մեսրոպ Մաշտոցի անժխտելի դերակատարու-

թեանը՝ հայ ազգի հոգեմտաւոր արժէքների կերտման եւ վերելքի գործում:

Գեղարուեստական ծրագրով երեկոն իրենց ուսուցիչների համար յիշարժան դարձրին մատաղ սերունդը: Ծրագրի առաջին բաժնում խմբական երգերի կատարմամբ ելոյթ ունեցան «Արմէն» երկսեռ տարրական կրթահամալիրի աշակերտները՝ Արսինէ Մարգարեանի ղեկավարութեամբ. այս շարանն աւարտուեց երգի մենակատարմամբ՝ ղեկավար տկն. Մարգարեանի միջոցով: Վերոնշեալ կատարումներն իրականացուեցին մայեստրո Համիկ Ալեքսանդրեանի դաշնամուրի նուագակցութեամբ, իսկ որպէս գեղարուեստական ծրագրի առաջին բաժնի վերջաբան մայեստրոն կատարեց իր հեղինակած դաշնամուրային հմարներից մէկը:

Ընթացքում ցուցադրուեցին դպրոցական առօրեայ կեանքի թեմայով հումորային կարճ ֆիլմեր, ապա իրագործուեց աշակերտական ծրագրի երկրորդ բաժինը՝ այս անգամ Ծահինշահրի «Սրբոց Վարդանանց» տարրական եւ «Մասիս» ուղեցոյց դպրոցների սաների խմբական երգերով ու մեներգերով՝ Նարբէ Գրիգորեանի ղեկավարութեամբ:

Այնուհետեւ Կրթական խորհրդի կողմից նախատեսուած պատուոգրերով ու նուէրներով գնահատուեցին անցնող տարեշրջանի աւարտին հանգստի կոչուած ուսուցչուհիներ՝ Մառիթա Քեշիշեանն ու Անետ Ղազարեանը, որից յետոյ իր ուսուցչութեան տարիների գեղեցիկ եւ զւարճալի յուշերով ներկաների հետ կիսուեց տկն. Քեշիշեանը:

Որպէս երեկոյի եզրափակիչ խօսք իր հայրական օրհնանքը փոխանցեց թեմի կաթողիկոսական փոխանորդ գերպ. Տ. Սիփան Ծ. վրդ. Քէչէճեանը: Նա գնահատելով Կրթական խորհրդին՝ երեկոյի կազմակերպման համար, ինչու չէ նաեւ գեղարուեստական կատարողներին՝ ծրագրի ընթացքում հնչած «Իմ փոքրիկ նաւակ» երգի բառերը փոխ առնելով, իւրաքանչիւր աշակերտին նմանեցրեց թղթից պատրաստուած փոքրիկ նաւակի եւ աւելացրեց, որ այս դիւրաբեկ նաւակները հսկայական պողպատեայ նաւերի կը վերածուեն ոչ միայն մեր խրախուսանքներով ու քաջալերանքներով, այլեւ մեր ջերմեռանդ աշխատանքով: Նա իր խօսքի մի այլ բաժնում կարեւորութեամբ ընդգծեց, որ ուսուցիչն այն ժամանակ իր մեծագոյն յաջողութիւնը կարձանագրի, երբ որպէս նաւապետ եւ նաւավար կարողանայ այս փոքրիկ նաւակները տգիտութեան փոթորիկներով անցկացնել եւ շրջանաւարտութեան խաղաղ նաւահանգիստ հասցնել:

Երեկոյի աւարտին աւանդոյթի համաձայն ներկաները միասնաբար լուսանկարուեցին, ապա դիտելով կրթահամալիրի կենտրոնական սրահում կազմակերպւած գրքերի ցուցահանդէսը, մօտիկից ծանօթացան Կրթական խորհրդի պատուէրի հիման վրայ ՀՀ Կրթութեան եւ գիտութեան նախարարութեան տրամադրած գրքերին: Ցուցադրւած գրքերի շարանում տեղ էին գտել տարբեր օղակներին պատկանող դասագրքեր, դպրոցական բառարաններ եւ ուսումնաօժանդակ, մեթոդիկայի ու արտադասարանային աշխատանքների գրքեր, որոնց օգտագործելու են թեմիս ուսուցիչները՝ աշխատանքի առաւել արդիւնաւորման համար:

Կենտրոնական սրահում կազմակերպւել էր նաեւ հիւրասիրութիւն, ուր հրաւիրեալները ճաշակեցին անուշաբոյր պատառիկները, որոնք պատրաստւել էին Ն. Զ. Հայ Կանանց Գթութեան միութեան անդամուհիների միջոցով:

Հարկ է նշել, որ հիւրասիրութեան ընթացքում Կրթական խորհրդի անդամները մօտենալով ուսուցիչներին՝ նրանց փոխանցեցին խորհրդի սրտագին շնորհաւորանքները, ինչու չէ նաեւ առիթի կապակցութեամբ պատրաստած պատուոգրերն ու նւէրները:

ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ Ս. ԱՍՏՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ, Ս. ԵՒ ԱՆՄԱՀ ՊԱՏԱՐԱԳԻ ՄԱՏՈՒՑՄԱՄԲ ՆՇԻՏՑ Ս. ԱԲԳԱՐ ՆԱԽԱՎԿԱՅ ԹԱԳԱՒՈՐԻ ՏՕՆԸ

Քրիստոսին հաւատացող մեր առաջին թագաւոր Ս. Աբգարի տօնի առթիւ եւ 1841 թւականին Նոր Ջուղայի Ս. Աստուածածին եկեղեցու շրջափակում կանգնեցւած «Հայկեան Հայրենասիրական» դպրոցի հիմնադիր Աբգարեան բարերար գերդաստանի յիշատակին, նախագահութեամբ Սպահանի հայոց թեմի կաթողիկոսական փոխանորդ գերպ. Տ. Սիփան Ծ. վրդ. Քէչէճեանի, Ս. եւ անմահ Պատարագ մատուցւեց երեքշաբթի՝ դեկտեմբերի 6-ի առաւօտեան, Նոր Ջուղայի Ս. Աստուածածին եկեղեցում:

Օրւայ պատարագիչն էր նոյն եկեղեցու ծխատէր քահանայ հայր արժն. Տ. Խաչատուր քհնյ. Զարգարեանը: Արարողութեանը մասնակցել էին նաեւ թեմի հոգեւորականաց ու դպրաց դասերը, իսկ շարականների երգեցողութեամբ հանդէս եկաւ Ս. Ամենափրկչեան վանքի «Կոմիտաս» երգչախումբը:

Ս. Պատարագին ներկայ էին հաւատացեալ ժողովուրդ եւ աւանդոյթի համաձայն Նոր Ջուղայի Հայոց ազգային մանկապարտէզ-նախակրթարանի սաները՝ դպրոցի տեսչութեան, ուսուցչական կազմի ու Ծնողական խորհրդի ընկերակցութեամբ:

Արարողութեան ընթացքում յաւուր պատշաճի քարոզեց պատարագիչ քահանայ հայրը: Նա ներկայացնելով Ս. Աբգար թագաւորի կեանքը, տօնի խորհուրդը եւ նրա իմաստն ու նշանակութիւնը մեր կեանքում եւ յիշելով Աբգարեան բարերար գերդաստանին՝ գնահատեց տարիների ընթացքում այս տօնի շրջագծում ձեւաւորւած գեղեցիկ աւանդոյթը՝ մանկապարտէզ-նախակրթարանի սաների ներկայութիւնն արարողութեանը: Քահանայ հայրը վերջում բոլորին յորդորեց, որ առաւել բծախնդրութեամբ եւ ուշադրութեամբ զբաղւեն իրենց կեանքի ու ընտանիքի հարստութիւնների՝ զաւակների, դաստիարակութեան եւ ուսման հարցերով:

Աւարտին մանկապարտէզ-նախակրթարանի բոլոր սաներն ու ներկայ ժողովուրդը Ս. Հաղորդութիւն ստացան:

Ս. Պատարագից յետոյ, եկեղեցու բակում, Նոր Ջուղայի Հայոց առաքելական

եկեղեցեաց վարչութեան յանձնարարութեամբ եւ մանկապարտէզ-նախակրթարանի Ծնողական խորհրդի միջոցով պատրաստուած մրգերը բաժանեցին սաներին, ապա Ս. Աստուածածին եկեղեցու Տիկնանց յանձնախմբի կազմակերպութեամբ եկեղեցու սրահում տեղի ունեցաւ համեստ հիւրասիրութիւն, որտեղ մանկապարտէզի սաներից ոմանք իրենց գեղեցիկ ասմունքներով բազմապատկեցին ներկաների խանդավառութիւնը:

Հիւրասիրութեան աւարտին թեմիս կաթողիկոսական փոխանորդն իր օրհնութիւնը փոխանցելով բոլորին, գնահատանքի խօսք ուղղեց օրուայ կազմակերպական աշխատանքներում դերակատարներին եւ մանկապարտէզ-նախակրթարանի տեսչութեանը, ուսուցչական կազմին ու Ծնողական խորհուրդին՝ սաների մասնակցութիւնն ապահովելու համար:

Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԽԱՎԿԱՅԻ ԵՒ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՍԱՐԿԱՒԱԳՆԵՐԻ ՏՕՆԸ

Երկուշաբթի՝ դեկտեմբերի 25-ին, Ս. Ստեփանոս Նախավկայի տօնի օրը, Նոր Ջուղայի նոյնանուն եկեղեցում, նախագահութեամբ Սպահանի հայոց թեմի կաթողիկոսական փոխանորդ գերպ. Տ. Սիփան Ծ. վրդ. Քէչէճեանի, սուրբ եւ անմահ Պատարագ մատուցեց ձեռամբ Շահինշահիրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ գերպ. Տ. Անանիա Ծ. վրդ. Գուճանեանի: Պատարագի երգեցողութիւնը կատարեց Ս. Ամենափրկչեան վանքի «Կոմիտաս» երգչախումբը: Արարողութեանը ներկայ էին թեմի հոգեւորականաց եւ դպրաց դասերը եւ հաւատացեալ ժողովուրդ:

Ս. Սեղանին եւ Պատարագին սպասարկում էին Նոր Ջուղայի եկեղեցիների ամբողջ սարկաւագներն ու կիսասարկաւագները, ովքեր, իբրեւ բացառիկ պարագայ միայն Ս. Ստեփանոսի տօնին, իրենց գլխին կրում էին քահանայական սաղաւարտ:

Յընթացս Ս. Պատարագի, քարոզի պահին, պատարագիչ Հայր Սուրբը ներկաներին փոխանցեց իմաստուն եւ բովանդակալից քարոզ, որի մէջ վեր առաւ նուիրեալ ծառայութիւնն իբրեւ հոգեւորականի եւ եկեղեցուն նուիրուած բոլոր անձանց ճշմարիտ ուղին: Նա նշելով, որ Քրիստոսը նոյնիսկ մարդկութեանը ծառայելու առաքելութեամբ գործեց, յորդորեց եկեղեցու սպասաւորութեանը կոչուած սարկաւագաց դասին, որպէսզի իրենց կեանքում ամենից աւելի արժեւորեն անկեղծ եւ ուրախութեամբ ծառայութիւնը նախ Աստծուն ապա եկեղեցու ճամբով՝ հաւատացեալ ժողովրդին:

Ս. Պատարագի աւարտին բեմ բարձրացաւ նաեւ հոգեւորականաց դասը, եւ կաթողիկոսական փոխանորդ Հայր Սուրբի գլխաւորութեամբ, Ս. Ստեփանոսի աջով կատարուեց Զրօրհնէքի արարողութիւն ու օրհնուած ջուրը բաժանուեց հաւատացեալներին՝ իբրեւ հիւանդութիւնների եւ դժուարութիւնների փարատման միջոց եւ աստուածային օրհնութեամբ լիցքաւորող սրբութիւն:

Եկեղեցական արարողութիւնից յետոյ, Ս. Ստեփանոս եկեղեցու սրահում, Նոր Ջուղայի Հայոց առաքելական եկեղեցեաց վարչութեան եւ եկեղեցու Տիկ-

Նանց յանձնախմբի կազմակերպութեամբ տեղի ունեցաւ հիւրասիրութիւն, որի ընթացքում խօսք արտասանեց Նոր Ջուղայի Հայոց առաքելական եկեղեցեաց վարչութեան ներկայացուցիչ Լիդա Սիմոնեանը եւ սարկաւագներին իրենց տօնի առթիւ շնորհաւորանքներ փոխանցեցին գերպ. Տ. Սիփան Ծ. վրդ. Քէչէճեանն ու արժն. Տ Վազգէն քհնյ. Քէօշկէրեանը:

Վերջում ներկաները շնորհաւորեցին տիրացուներին՝ իրենց տօնը եւ բարի ծառայութիւն մաղթեցին նրանց:

ԳՐՔԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍ-ՎԱՃԱՌՔ՝ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ «ՔԱՆԱՆԵԱՆ» ԵՒ «ԿԱՏԱՐԻՆԵԱՆ» ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ՝ ՆՒԻՐՒԱԾ «Ս. ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ» ԳՐԱԴԱՐԱՆԻ 110-ԱՄԵԱԿԻՆ

Նոր Ջուղայի հայոց ազգային «Քանանեան» աղջկանց եւ «Կատարինեան» տղայոց միջնակարգ դպրոցների տնօրինութեան ու անձնակազմի նախաձեռնութեամբ կազմակերպուող ամենամեայ գրքի ցուցահանդէս-վաճառքը այս տարի նուիրուեց Ս. Ամենափրկչեան վանքի «Ս. Ներսէս Շնորհալի» գրադարան-մատենադարանի 110-ամեակին:

10-օրեայ այս ցուցահանդէսի բացման հանդիսութիւնը տեղի ունեցաւ ուրբաթ՝ նոյեմբերի 25-ի առաւօտեան, ներկայութեամբ՝ Սպահանի հայոց թեմի կաթողիկոսական փոխանորդ գերպ. Տ. Սիփան Ծ. վրդ. Քէչէճեանի, Շահինշահիրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ գերպ. Տ. Անանիա Ծ. վրդ. Գուճանեանի, ազգային մարմինների ու դպրոցների ներկայացուցիչների, ուսուցիչների, աշակերտների, ծնողների եւ համայնքի ընթերցասէր ժողովրդի:

Սկզբում պաշտօնական բացումը կատարուեց գերպ. Տ. Սիփան Ծ. վրդ. Քէչէճեանի միջոցով ժապաւէնի յատումով, ապա կազմակերպիչ դպրոցների գրադարանավարուհի Կարին Տէր-Մարտիրոսեանը ողջունելով ներկաներին անդրադարձ ունեցաւ ամենամեայ այս միջոցառման կազմակերպման անհրաժեշտութեանը, բացատրութեամբ հանդէս եկաւ ցուցադրուած գրքերի ու իրերի շուրջ, իսկ վերջում անդրադառնալով նաեւ այս տարուայ ցուցահանդէսի կազմակերպման առիթին՝ խօսքը փոխանցեց յոբելեար գրադարանի գրադարանավարուհի Վերգինէ Միրզախանեանին:

Օրդ. Միրզախանեանն սկզբում ակնարկ ունենալով «Ս. Ներսէս Շնորհալի» գրադարանի հիմնադրման պատմութեանն ու յետագայում պատկան մասնաշէնքի նորոգութեան ու գրքերի համալրման համար կատարուած աշխատանքներին՝ կարեւորութեամբ ընդգծեց վերջին տարիների ընթացքում գրադարանի արդիականացման եւ աշխատանքների ծաւալի ընդլայնման ուղղութեամբ կատարուած գործունէութիւնը, ինչպիսիք են՝ էլեկտրոնային շտեմարանի հիմնադրումը, ընթերցանութեան համար համապատասխան հնարաւորութիւններով մանկա-պատանեկան բաժնի ստեղծումը, ամենամեայ կարգով գրքերի շարանի համալրումը եւ թեմիս

Թեմական խորհրդի ու Հայաստանի Ազգային գրադարանի միջեւ համաձայնութեան յուշագրի ստորագրումը:

Այնուհետեւ «Քանանեան» դպրոցի փոխ-տեսուչ Ռիմա Սիմոնեանը ներկայացրեց համայնքում գործող չորս գրադարաններին, ապա աւանդոյթի համաձայն զոյգ դպրոցների կողմից գնահատագրերի եւ յուշանուէրների արժանացան սոյն գրադարանների պատասխանատուները, որի շրջագծում թեմի կաթողիկոսական փոխանորդի ձեռամբ պարգեւատրուեցին՝ «Արմէն» երկսեռ տարրական կրթահամալիրի գրադարանի պատասխանատու Այիդա Ալեքսանդրեանը, «Քանանեան» եւ «Կատարինեան» դպրոցների գրադարանավարուհի Կարին Տէր-Մարտիրոսեանը, Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան «Միքայէլ Վարանդեան» գրադարանի պատասխանատու Երանուշ Թահմազեանը եւ «Ս. Ներսէս Շնորհալի» գրադարանի գրադարանավարուհի Վերգինէ Միրզախանեանը:

Սոյն ցուցահանդէս-վաճառքում ցուցադրուել էին՝ Իրանում եւ Հայաստանում հրատարակուած տարբեր լեզուներով գիտական, գրական, պատմական եւ այլ թեմաներով գրքեր, մանկա-պատանեկան հրատարակութիւններ ու մտքի խաղեր, իսկ առանձին կրպակում ցուցադրուել էին նաեւ «Ս. Ներսէս Շնորհալի» գրադարանի համար գնուած վերջին գրքերը:

Յատկանշական է, որ ցուցահանդէսին առընթեր երկուշաբթի՝ նոյեմբերի 28-ի առաւօտեան, գերպ. Տ. Անանիա Ծ. վրդ. Գուճանեանի բանախօսութեամբ, տեղի ունեցաւ «Ընթերցանութեան պակասը հասարակութեան մէջ» խորագրով բանախօսական զրոյցը, իսկ չորեքշաբթի՝ նոյեմբերի 30-ի առաւօտեան՝ գիտելիքների մրցոյթ՝ 7-րդ դասարանների աշակերտութեան մասնակցութեամբ:

ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶ-ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆԻ ՍԱՆԵՐԻ ԱՄԱՆՈՐԵԱՅ ՁԵՌՆԱՐԿ

Նոր Ջուղայի հայոց ազգ. մանկապարտէզ-նախակրթարանի աւանդոյթի վերածուած ամանորեայ հանդէսը, կայացաւ չորեքշաբթի՝ դեկտեմբերի 28-ի երեկոյեան, Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան սրահում:

Սոյն ձեռնարկին, որն արգասիքն էր դպրոցի աշխատակազմի եւ սաների աւելի քան մէկ ամիս կատարած անխոնջ ու ջերմեռանդ վարժութիւնների ու նախապատրաստական աշխատանքների, ներկայ էին՝ Սպահանի հայոց թեմի կաթողիկոսական փոխանորդ գերպ. Տ. Սիփան Ծ. վրդ. Քէչէճեանը, Թեմական խորհրդի ատենապետ պրն. Վրէժ-Տէր Մարտիրոսեանը, Կրթական խորհրդի ու հայոց ազգ. դպրոցների ներկայացուցիչները եւ սաների ծնողներն ու հարազատները:

Երեկոյի մեկնարկը տրուեց դպրոցի տեսչուհի Քառոլին Դիլանչեանի բացման խօսքով, ուր մաղթեց՝ գալիք տարուայ ընթացքում խաղաղութիւն տիրի աշխարհում, իրականանան բոլոր երազանքները եւ իրաքանչիւր բացուող օր խինդ ու բերկրանք բերի մանուկներին: Նա շեշտեց նաեւ «*Ամանորը հրաշալի տօն է. այն կախարդական է, խորհրդաւոր, զարմանալի, անկրկնելի ու հմայիչ: Այս տօնին մարդիկ սպասում են հերթական հրաշքի, մի լուսաւոր հեքիաթի եւ կարծում եմ որեւէ մէկը հեքիաթը, հրաշքն ու կախարդանքը չի պատկերացնում առանց մեր մանուկների*»:

Այնուհետեւ իրականացուեց մանկապարտէզի կրտսեր ու աւագ խմբակների սաների ներկայացումը, որի համաձայն չար կախարդն իր սեւ մոգութեամբ յաւերժացրել էր ամառուայ տօթը եւ խափանել ձմեռն ու Նոր տարին: Կախարդանքը վերացնելու համար՝ սկզբում փորձեր

կատարեցին եօթ գաճաճները, ապա հեքիաթների արքայազներն ու արքայադուստրերը, սակայն աւաղ նրանցից ոչ մէկին էլ չյաջողուեց կոտրել հզօր կախարդանքը: Յաջորդիւ եկան բարի փերիները, ովքեր իրենց բարութեան ու իմաստութեան ամբողջ ուժը կուտակելով կախարդական փայտիկների մէջ, ոչնչացրին սեւ մոգութիւնն ու ձիւն պարգեւեցին հեքիաթների աշխարհին: Իսկ վերջում յայտնուեցին փոքրիկ Ձմեռ պապիկներն ու Ձիւնանուշները, որոնք ոչ միայն աւետեցին Նոր տարւայ գալուստը, այլեւ իրենց բարեմաղթանքները փոխանցեցին բոլորին: Ամբողջ արարը ողողուած էր ասմունքներով ու գեղեցիկ պարերով: Ներկայացումը եզրափակուեց արտասանութիւնից ու երգերից կազմուած շարանով, ինչու չէ նաեւ մանուկների դէմքին գծուած գոհունակ ժպիտով, որն առաջացաւ Ձմեռ պապիկից մրգեր ստանալուց յետոյ:

Երկրորդ անգամ բեմը բացուելուն պէս մուտք գործեցին նախակրթարանի սաները՝ աղջիկները եղեւնու, իսկ տղաները եղջերոյի կերպարներ ընդունած: Քիչ յետոյ նրանց միացաւ փերին, ով առաջարկեց բոլորին հեքիաթների աշխարհի հանդէսին հասնելու համար ճամբորդել իր կառքով: Եւ այսպէս ճանապարհին, մանուկներից իւրաքանչիւրը երկխօսութիւն ունեցաւ փերիի հետ: Ծրագրի այս բաժինը լցուած էր երգերով ու պարերով:

Երբ խումբը տեղ հասաւ, դարպասների մօտ օգնութիւն խնդրեց դահլիճում ներկայ ծնողներից, որպէսզի միասնաբար «Դէ արի Ձմեռ պապիկ» երգով կանչեն ալեհեր պապիկին: Ծնողների ու սաների միասնական երգին անսալով մուտք գործեց Ձմեռ պապիկը եւ բոլորին գեղեցիկ մրգեր նւիրեց: Սաներն արարը եզրափակեցին ամանորեայ մաղթանքներով, իսկ ամենավերջում բեմ հրաւիրեցին գերպ. Հայր Սուրբին՝ իր հայրական օրհնանքը փոխանցելու համար: Սոյն ներկայացման բարի փերիի դերը մարմնաւորեց Ճաղիկ Մատթէոսեանը:

Գերպ. Տ. Սիփան Ծ. վրդ. Քէչէճեանն իր հիացմունքն արտայայտեց, առ այն, որ իր կեանքում առաջին անգամւայ համար բեմ հրաւիրուեց շատ գեղեցիկ կերպով՝ մանուկների միջոցով կատարուած հրաւէրով: Ապա անդրադառնալով երեկոյի երկու ներկայացումներին՝ շեշտեց, որ սաներին յաջողուեց հանդիսատեսին ամբողջ սրտով ու հոգով փոխադրել իրենց մանկութեան ժամանակաշրջան: Նա ընդգծեց նաեւ՝ փոքրիկները հրեշտակների պէս օրհնաբեր են եւ ունեն այնպիսի զօրաւոր կախարդանք, որը կարողանում են իրենց մի կաթիլ արցունքով կախարդել ու սառեցնել մեզ կամ էլ իրենց գեղեցիկ ժպիտով դրախտի վերածել մեր ներաշխարհը: Հայր Սուրբի պատգամն աւարտուեց շնորհակալական խօսքով՝ ուղղուած դպրոցի պատասխանատուներին եւ յատկապէս սիրասուն փոքրիկներին:

Նշելի է, որ Ամանորն աւելի տպաւորիչ դարձաւ դպրոցի անձնակազմի եւ ծնողական խորհրդի անվերապահ ջանքերով կազմակերպուած ամենամեայ նախատօնակի ու նկարահանման ծրագրերով: Հինգշաբթի՝ դեկտեմբերի 22-ի երեկոյեան, Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան սրահում, անակնկալներով լի միջոցառման ընթացքում համայնքի անդամները յատկապէս փոքրիկներն առիթ ունեցան լուսանկարուելու Ձմեռ պապիկի հետ, իսկ երկուշաբթի՝ դեկտեմբերի 26-ի առաւօտեան, դպրոցում, իրականացուեց նախատօնակ, ուր Ձմեռ պապիկն այցելեց աշակերտներին, ունկնդրեց նրանց ցանկութիւնները, պարեց ուզարճացաւ սաների հետ եւ վերջում գեղեցիկ նւէրներ պարգեւեց նրանց:

Ս. ԱՄԵՆԱՓՐԿՉԵԱՆ ՎԱՆՔԻ «ԿՈՄԻՏԱՍ» ԵՐԳՉԱԽՄԲԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՄԵՐԳԸ

Աւելի քան 40 տարի վաստակ արձանագրած եւ բեղուն գործունէութիւն ծաւալած Ս. Ամենափրկչեան վանքի «Կոմիտաս» երգչախումբը 2016 թւականի իր տարեկան համերգն իրականացրեց ուրբաթ՝ դեկտեմբերի 23–ի երեկոյեան, Նոր Ջուղայի հայոց ազգային կրթահամալիրի «Ալենուշ Տէրեան» սրահում՝ ղեկավարութեամբ մայեստրո Արմէն Ամիրխանեանի:

Համերգին ներկայ էին՝ Սպահանի

հայոց թեմի կաթողիկոսական փոխանորդ գերպ. Տ. Սիփան Ծ. վրդ. Քէչէճեանը, Շահինշահրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ գերպ. Տ. Անանիա Ծ. վրդ. Գուճանեանը, ազգային մարմինների եւ միութիւնների ներկայացուցիչներ ու ժողովուրդ:

Սկզբում ներկաներին ողջոյնի խօսք ասաց նոյն երգչախմբի անդամուհի Լալագէ Իսաղուլեանը, ով նաեւ ընթացքում իրազեկեց կատարող իւրաքանչիւր համարի մասին:

Համերգային ելոյթի շրջագծում կոմիտասցիներն կատարեցին Կոմիտասի «Կուժն առայ», «Գնա, գնա» եւ «Երկնից, գետնից» ստեղծագործութիւնները, Էդգար Յովհաննիսեանի «Անուշ անուրջով»-ը, «Էրզրումի շորոր»-ը՝ Գէորգ Մանասեանի երաժշտութեամբ, Ռոբերտ Պետրոսեանի «Ֆանտազիա» եւ «Մուսա լեռան կարօտը» երգերն ու Ալեքսանդր Յարութիւնեանի «Պոէմ երգի մասին» ստեղծագործութիւնը, իսկ ընթացքում երգչախմբի արական սեռի ներկայացուցիչների կատարմամբ ժողովրդական երգերից հնչեցին «Լուսնակ գիշեր»-ը՝ Թաթուլ Ալթունեանի եւ «Աղջիկ դու սիրուն»-ը Կարա Մուրզայի մշակմամբ:

Աւարտին Սպահանի հայոց թեմի կաթողիկոսական փոխանորդ գերպ. Տ. Սիփան Ծ. վրդ. Քէչէճեանն իր հայրական պատգամը փոխանցեց ներկաներին: Նա դրւատանքով արտայայտուեց երգչախմբի կատարումների մասին եւ աւելացրեց, որ անհամբերութեամբ է սպասել այս համերգային ելոյթին: Հայր Սուրբն անդրադառնալով յատկապէս խմբի առաջին երգին, որը գիւղացու կողմից առ Աստուած բարձրացւած աղօթք է, նման երգի ընտրութիւնը որպէս երեկոյի մեկնարկ, օրհնաբեր համարեց եւ այդ կապակցութեամբ գնահատեց ղեկավարի գեղեցիկ մտայղացումը: Գերպ. Տ. Սիփան Ծ. վրդ. Քէչէճեանն իր արտայայտութիւնները եզրափակեց շնորհաւորանքի, քաջալերանքի եւ գնահատանքի խօսքերով:

Վերջում, ընդունւած կարգի համաձայն, կոմիտասցիները կատարեցին նաեւ իրենց յաջորդ համերգից մի հատւած՝ Վիվալդիի «Գլորիա»-ն:

Երգերի գործիքաւորումները կատարել էին Ռաֆֆի Շահբազեանի եւ Հարմա Կարապետեանի միջոցով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ «ՕԱԶԻՍ» ՄԱՆԿԱԽԱՂԱՅԻՆ ԹԱՏՐՈՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՄԲ՝ ՍԿՍԻԵՑԻՆ ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ԹԱՏՐՈՆԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 130-ԱՄԵԱԿԻ ՅՈԲԵԼԵԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

2017 թւականի փետրւարին լրանում է Նոր Ջուղայի թատրոնի հիմնադրման 130-ամեակը: Յոբելեանական այս առիթը պատշաճօրէն նշելու համար՝ Սպահանի հայոց թեմի Թեմական խորհրդը կեանքի է կոչել յոբելեանական յանձնախումբ, որի կողմից ծրագրւած ձեռնարկների ու միջոցառումների շարանը մեկնարկեց հինգշաբթի՝ դեկտեմբերի 8-ի երեկոյեան, Նոր Ջուղայի հայոց ազգային կրթահամալիրի «Ալենուշ Տէրեան» դահլիճում, Հայաստանից ժամանած «Օազիս» մնջախաղային (Փանթոմիմ) թատերախմբի ներկայացմամբ:

Երեկոյին ներկայ էին՝ Սպահանի հայոց թեմի կաթողիկոսական փոխանորդ գերպ. Տ. Սիփան Ծ. վրդ. Քէչէճեանը, Շահինշահրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ գերպ. Տ. Անանիա Ծ. վրդ. Գուճանեանը, քահանայից դասը, ազգային մարմինների, շրջանի Հայ Դատի յանձնախմբի, հայոց ազգային դպրոցների, միութիւնների ու մշակութային խմբերի ներկայացուցիչներ եւ հոծ

թով թատերասէր ժողովուրդ:

Ծրագրի բացումը կատարուեց յոբելեանական յանձնախմբի նախագահ Նիկիտ Միրզայեանսի խօսքով: Նա սկզբում ներկաներին հրաւիրեց մէկ րոպէ յոտնկայս լռութեամբ յարգել սրանից 28 տարի առաջ՝ 1988 թուականին, Հայաստանում տեղի ունեցած ողբերգական երկրաշարժի զոհերի յիշատակը, այնուհետեւ իր խօսքի շարունակութեան մէջ անդրադարձ ունեցաւ Նոր Ջուղայում թատրոնի հիմնադրման պատմական անցեալին, ինչու չէ նաեւ ներկայացրեց «Օազիս» թատերախմբին ու խմբի բեմադրիչ Ռոբերտ Ծատուրեանին: Պրն. Միրզայեանսը վերջում ընդգծելով, որ Իրանում առաջին կին աստղաֆիզիկոս Ալենուշ Տէրեանի մեծ հայրը՝ Բեգլար Աղայեանը, եղել է Նոր Ջուղայի թատրոնի հիմնադիրներից, հետաքրքիր զուգադիպութիւն համարեց, որ յոբելեանական առաջին ձեռնարկը տեղի է ունենում հենց յիշեալի թոռան անուան դահլիճում եւ յոյս յայտնեց, որ սոյն միջոցառումը խթանելու է երիտասարդներին՝ թատրոնի ասպարէզում առաւել ներգրաւելու եւ ջիք ու ջանք ներդնելու համար:

Բացման խօսքին յաջորդեց հետաքրքիր ներկայացումը, որտեղ մնջախօս շնորհաշատ դերասանների միջոցով մատուցեց Շեքսպիրի աշխարհահռչակ ստեղծագործութիւններից մէկը՝ «Լիր Արքա»-ն: Սոյն պիեսի համաձայն, հզօր արքա Լիրը զգալով իր ծերութիւնը, որոշում է հրաժարուել իշխանութիւնից եւ երկիրը բաժանել իր երեք դուստրերի միջեւ: Նա շռայլութիւն ցուցաբերելու համար՝ պահանջում է արքայադուստրերից յայտնել, թէ որքան են սիրում իրենց արքա հօրը: Խնդիրներն առաջանում են հենց այս որոշումից, քանի որ երկու աւագ դուստրերը շողոքորթութեամբ են հանդէս գալիս, իսկ կրտսերը՝ միայն յայտնում է իր անկեղծ զգացմունքները՝ շնորհակալ լինելով իր հօրը՝ իրեն մեծացնելու եւ դաստիարակելու համար: Թագաւորը զայրանում է կրտսեր աղջկայ չոր վերաբերմունքից եւ երկիրը բաժանում է երկու աւագների միջեւ. այստեղից էլ զարգանում է պիեսը՝ արքա Լիրի համար առաջացող յետագայ դժբախտ դէպքերի շուրջ:

Ներկայացման աւարտին իր հայրական օրհնանքը փոխանցեց թեմի կաթողիկոսական փոխանորդ գերպ. Տ. Սիփան Ծ. վրդ. Քէչէճեանը: Նա գնահատելով դերասաններին ու բեմադրիչին եւ յատկապէս յոբելեանական յանձնախմբին՝ երեկոն կազմակերպելու համար, դրուատանքով արտայայտուեց ներկայացման մասին՝ շեշտելով, որ հետաքրքիր կատարման շնորհիւ ժամանակը ակնթարթի պէս անցաւ: Հայր Սուրբն անդրադառնալով նաեւ պիեսի պատմութեանը՝ գնահատեց հայ ազգի մօտ ձեւաւորուած աւանդոյթը՝ յետ մահու կտակը բացելու եւ ժառանգութիւնը բաժանելու կապակցութեամբ:

Վերջում ազգային իշխանութեան անունից գրքերով ու նուէրներով պարգեւատրեցին խմբի անդամները:

Հարկ է նշել, որ «Օազիս» թատերախումբը Իրան էր ժամանել Սպահանում կայացած «Հաշմանդամների թատրոնը» խորագրով 4-րդ միջազգային փառատօնի շրջագծում ելոյթ ունենալու համար:

ՅՈՒՇԵՐԵԿՈՅ՝ ՔԱՂԱՔԱԿԱՆ-ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾԻՉ ԵՒ Հ.Յ.Դ. ԲԻՒՐՈՅԻ ԱՆԴԱՄ ՎԱՀԱՆ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ ՄԱՀՒԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԵԼԻՑԻ ԱՌԹԻՒ

Քաղաքական-հասարակական գործիչ, Հ.Յ.Դ. Բիւրոյի տարիների անդամ, Հ.Հ. Ազգային Ժողովի ժամանակի փոխ-նախագահ եւ Գերմանիայում Հ.Հ. արտակարգ եւ լիազօր դեսպան՝ Վահան Յովհաննիսեանի մահուան երկրորդ տարելիցի առթիւ, Նոր Ջուղայի Հայ Դատի «Արձագանք» քարոզչական յանձնախմբի նախաձեռնութեամբ տեղի ունեցաւ յուշերեկոյ, հինգշաբթի՝ նոյեմբերի 17-ի երեկոյեան, Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան սրահում:

Միջոցառմանը ներկայ էին՝ Սպահանի հայոց թեմի կաթողիկոսական փոխանորդ գերպ. Տ. Սիփան Ծ. վրդ. Քէչէճեանը, Շահինշահիրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ գերպ. Տ. Անանիա Ծ. վրդ. Գուճանեանը, քահանայից դասը, ազգային մարմինների, Հայ Դատի յանձնախմբի, միութիւնների եւ հայոց ազգ. դպրոցների ներկայացուցիչներն ու ժողովուրդ:

Ծրագրի մեկնարկը տրուեց հաւատաւոր դաշնակցականի յիշատակին մէկ րոպէ յոտնկայս լռութեամբ, որին յաջորդեց երեկոյի հաղորդավարուհի Մանիա Ղուկասեանի ողջոյնի եւ բացման խօսքը, ուր անդրադարձ կար յատկապէս Վահան Յովհաննիսեանի կենսագրութեանը: Յուշերեկոյի ընթացքում հաղորդավարուհին նոյնպէս ներկայացրեց դրուագներ եւ յուշեր նիւրեալ գործչի կեանքից ու գործունէութիւնից:

Միջոցառման շարունակութեան մէջ բանախօսեց Հայաստանից հրաւիրուած ազգային-հասարակական գործիչ եւ Հ.Հ. Կրթութեան ու գիտութեան նախարարի խորհրդական Բագրատ Եսայեանը, ով անդրադառնալով Վահան Յովհաննիսեանի մարդկային բացառիկ յատկութիւններին եւ յանուն հայրենիքի, հայ ժողովրդի ու Հայ Յեղափոխական Դաշնակցութեան նրա ծաւալած բոլորանուէր գործունէութեանը, նշեց. «*Վահանն այն բացառիկ դէմքերից էր, որի կենսագրութեանը զուգահեռ եւ կենսագրութեանը համահունչ ստեղծուեց Հայաստանի անկախութիւնը։ Վահանի կենսագրութեամբ մենք կարող ենք հետեւել Հ.Յ.Դ.-ի ուղուն՝ խորհրդային Հայաստանի գոյութեան վերջին տարիներից մինչեւ Հայաստանի անկախանալը*»։ Այնուհետեւ յիշատակելով Վահան Յովհաննիսեանի կեանքից հետաքրքիր դրուագներ եւ յուշեր, հանդիսատեսին առաւել ծանօթացրեց լայնախոհ մտաւորականի խոհերին ու մտորումներին:

«*Այսպիսին էր Վահանը, մեր սիրելի ընկերը։ Վահանն իր անձով մարմնաւորեց Դաշնակցութեան 25-ամեայ ընթացքը՝ Դաշնակցութեան վերընձիւղումից Հայաստանում մինչեւ իր մահկանացուն կնքելը։ 25 տարեայ յարատեւ կռիւ հայ ժողովրդի իրաւունքների վերականգնման, յանուն Հայ Յեղափոխական Դաշնակցութեան*»,- այսպէս իր խօսքը եզրափակեց յարգելի դասախօսը:

Ծրագրի յաջորդ բաժնում ցուցադրուեց Վահան Յովհաննիսեանի յիշատակին պատրաստուած տեսանիւթը, ուր ներկայացուած էր նրա կեանքից ու գործունէութիւնից հատուածներ, որոնցով խորապէս յուզուեց հանդիսատեսը՝ նման ազնիւ ու հայրենասէր անհատականութեան վաղաժամ կորցնելու պատճառով: Տեսանիւթն աւարտուեց մեր յուշերից անջընջելի Վահան Յովհաննիսեանի արտայայտութիւններով:

Ծրագրի գեղարուեստական բաժնում «Անի» նուագախմբի նուագակցութեամբ երգերով հանդէս եկաւ Կարէն Օհանեանը, որը հանդիսատեսին ներկայացաւ ազգային-յեղափոխական երգերի կատարմամբ:

«ՀԵՌՈՒՍՏԱՄԱՐԱԹՈՆ 2016»-Ի ՇՐՋԱԳԾՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԵՑ ՆԻՒՐԱՀԱՒԱՔ

Հինգշաբթի՝ նոյեմբերի 24-ի երեկոյեան ժամը 7:30-ից, Նոր Ջուղայի Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան սրահում, «Հայաստան» համահայկական հիմնադրամի «Իմ Արցախ» նշանաբանի ներքոյ իրականացուած 2016 թւականի հեռուստամարաթոնի շրջագծում, շրջանի Հայ Դատի յանձնախմբի նախաձեռնութեամբ եւ Հ.Յ.Դ. «Ռուբէն» երիտասարդական միութեան կազմակերպութեամբ տեղի ունեցաւ ամենամեայ թելեթոն-նիւրահաւաքը:

Սոյն նիւրահաւաքին իրենց մասնակցութիւնը ցուցաբերեցին եւ նիւրատուութիւն կատարեցին՝ Սպահանի հայոց թեմի կաթողիկոսական փոխանորդ գերպ. Տ. Սիփան Ծ. վրդ. Քէչէճեանը եւ ազգային մարմինները, Իրանի իսլամական խորհրդարանում Սպահանի եւ հարաւային իրանահայութեան պատգամաւոր Ժորժիկ Աբրահամեանը, շրջանի Հայ Դատի յանձնախումբը, Շահինշահիի հայ համայնքի հոգեւոր տեսուչ գերպ. Տ. Անանիա Ծ. վրդ. Գուճանեանը եւ Նոր Ջուղայի ու Շահինշահիի միութիւնները, հայոց ազգային դպրոցները եւ ժողովուրդը:

Ինչպէս նախորդ տարիները, այս տարի եւս նիւրահաւաքից գոյացած գումարը փոխանցուելու է «Հայաստան» համահայկական հիմնադրամին:

ԱՇՆԱՆԱՅԻՆ ՎԱՃԱՌՔ՝
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՄԲ Ն.Ջ. ՀԱՅ Մ.Մ. «ԱՐԱՐԱՏ» ՄԻՈՒԹԵԱՆ ԵՐԷՑՆԵՐԻ ՄԻԱՒՈՐԻ

Կազմակերպութեամբ Նոր Ջուղայի Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան Երէցների միաւորի, ուրբաթ՝ նոյեմբերի 11-ին, սկսեալ ժամը 11:00-ից միութեան հանդիսութիւնների դահլիճում հերթական անգամ տեղի ունեցաւ աշնանային վաճառք, որտեղ վաճառքի էր հանուել աշնանային մրգերից ու բանջարեղէններից պատրաստուած եւ գեղեցիկ փաթեթաւորած թխուածքեղէն, թթուեղէն, մրգանուշ, ճթնի եւ այլ պահածոներ, որոնց բազմազանութիւնը վկայում էր միութեան Երէցների միաւորի վարչութեան ու ամբողջ անձնակազմի շաբաթների եւ ամիսների համատեղ ու արդիւնաւէտ ջանքերի մասին:

Սոյն վաճառքին մասնակցել էին նաեւ Նոր Ջուղայի Հայ կանանց գթութեան միութիւնը, որն ի զօրակցութիւն արցախահայութեանը, վաճառքի էր հանել Արցա-

խից բերուած մեղր, չիրեղէն, սուջուղ, մրգանուշների տեսակների եւ թթի դոշաբ, ինչպէս նաեւ Փերիոյ կրթասիրաց եւ Հայ ուս. Զհարմահալ միութիւնները՝ միութեան անդամները միջոցով պատրաստուած պահածոների ու թխուածքների վաճառքով:

Միջոցառումը առիթ էր նաեւ անհատական արտադրանքների վաճառքի համար, որին արձագանքել էին Նոր Ջուղայից եւ Շահինշահրից անհատներ:

Նշելի է, որ աշնանային գեղեցիկ յարդարանքով ստեղծուած աշխոյժ մթնոլորտը ընդունեց բազմահարիւր այցելուներ, որոնք վայելեցին նաեւ մատուցուած աւանդական ճաշեր ու այլ ուտեստներ եւ մասնակցեցին կազմակերպուած խաղերին:

Հ.Հ.-Ի ԿՐԹՈՒԹԵԱՆ ԵՒ ԳԻՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ ԵՒ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԷԻ ԱՆԴԱՄ ԲԱԳՐԱՏ ԵՍԱՅԵԱՆԸ ՀԻՒՐԸՆԿԱԼԻԵՑ Ն.Ջ. ՀԱՅ Մ.Մ. «ԱՐԱՐԱՏ» ՄԻՈՒԹԵԱՆ ՅԱՐԿԻ ՆԵՐՔՈՅ

Հ.Յ.Դ.-ի «Արձագանք» քարոզչական յանձնախմբի հրաւէրով, նոյեմբերի 16-ին Նոր Ջուղա էր ժամանել քաղաքական-հասարակական գործիչ եւ Հ.Հ.-ի Կրթութեան եւ գիտութեան նախարարի խորհրդական, Համաշխարհային սկաուտական կոմիտէի եւ Հ.Մ.Ը.Մ.-ի կենտրոնական վարչութեան անդամ Բագրատ Եսայեանը: Նա նոյեմբերի 16-ի երեկոյեան ժամը 8:00-ին այցելեց Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութիւն, ուր ընկերակցութեամբ կենտրոնական վարչութեան եւ Սկաուտական միաւորի Գերագոյն մարմնի ներկայացուցիչների շրջեց տարածքում՝ ծանօթանալով միութեան կառոյցին, ապա հանդիպում ունեցաւ կենտրոնական վարչութեան ներկայացուցիչների եւ Սկաուտական միաւորի Գերագոյն մարմնի անձնակազմի հետ:

Յարգելի հիւրի ներկայութիւնը ողջունեց կենտրոնական վարչութեան նախագահ Մասիս Մինասեանը եւ ներկայացրեց կենտրոնական վարչութեան եւ Սկաուտական միաւորի Գերագոյն մարմնի անձնակազմերին: Հանդիպման ընթացքում ծանօթացման նպատակով տեղեկութիւններ փոխանցուեց միութեան կառոյցի, առաքելութեան եւ ընդհանրապէս հինգ միաւորների միջոցով տարուող մարզա-մշակութային եւ դաստիարակչական աշխատանքների մասին, ի մասնաւորի զրոյց ընթացաւ Սկաուտական միաւորի կառոյցի եւ աշխատանքային ձեւի շուրջ: Քննարկուեցին նաեւ միաւորի, Հ.Մ.Ը.Մ.-ի եւ Հ.Ա.Ս.Կ.-ի միջեւ համագործակցութիւն ծաւալելու եւ ապագայ ծրագրերին մասնակից դառնալու հարցերը:

Նշելի է, որ պրն. Եսայեանը Նոր Ջուղա էր հրաւիրուած բանախօսելու՝ ՀՅԴ Բիւրոյի անդամ եւ ՀՀ ԱԺ ժամանակի փոխնախագահ Վահան Յովհաննիսեանի մահուան 2-րդ տարելիցի առիթով կազմակերպուած յուշերեկոյին:

ՎԵՐԱԲԱՑՈՒՄ Ն.Ջ. ՀԱՅ Մ. Մ. «ԱՐԱՐԱՏ» ՄԻՈՒԹԵԱՆ ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ՄԻԱՒՈՐԻ ՇԷՆՔԻ

Նոր Ջուղայի Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան շինարարական աշխատանքների եւ նորոգութիւնների շարքում, նորոգուել է նաեւ միութեան Սկաուտական միաւորի բաժանմունքը:

Շէնքի վերաբացումը կատարուեց ուրբաթ՝ նոյեմբերի 25-ի առաւօտեան, ձեռամբ՝ Սպահանի հայոց թեմի կաթողիկոսական փոխանորդ գերպ. Տ. Սիփան Ծ. վրդ. Քէչէճեանի: Ներկայ էին Թեմի Կրօնական խորհրդի ատենապետ պրն. Վարուժ Մովսիսեանը, նոյն խորհրդի անդամ Սաքօ Տէր-Յովհաննիսեանը, միութեան կենտրոնական վարչութեան, միաւորի Գերագոյն մարմնի անդամները եւ բոլոր սկաուտները՝ իրենց ծնողներով:

Շէնքի մուտքի մօտ ժապաւէնի հատումից յետոյ, ներկաներն ուղեկցութեամբ կենտրոնական վարչու-

թեան եւ միաւորի Գերագոյն մարմնի անդամների շրջեցին շէնքում, ծանօթացան կատարուած նորոգութիւններին եւ իւրաքանչիւր բաժնում կատարուելիք աշխատանքներին:

Այնուհետեւ բակում համեստ ընդունելութեան սեղանի շուրջ գերպ. Հայր Սուրբն իր հայրական օրհնանքի խօսքում շնորհաւորելով միութեան եւ միաւորի պատասխանատուներին, սկաւտներին եւ իրենց ծնողներին, իր ուրախութիւնը յայտնեց կատարուած աշխատանքների կապակցութեամբ եւ իր գոհունակութիւնը յայտնեց Թեմական խորհրդին, որ ապահովել է սոյն աշխատանքի նիւթականը: Նա շնորհակալութիւն յայտնեց ծնողներին, ովքեր իրենց զաւակներին քաջալերում են մասնակցել միաւորի աշխատանքներին, որտեղ որպէս փոքր զինուորներ առիթ են ունենում մարզուելու եւ դառնալու կարգապահ ու տիպար երիտասարդ-ուհի եւ տիպար հայ, որովհետեւ սկաւտութիւնը ինքնին անհատին դարձնում է աշխարհական զինուոր, որը վարում է կարգաւորուած ու կանոնաւորուած կեանք:

Իր արտայայտութիւնների շարունակութեան մէջ Հայր Սուրբն առանձնայատուկ շնորհակալութիւն յայտնեց պատասխանատուներին, ովքեր մեծ գիտակցութեամբ հսկում եւ հնարաւորութիւններ են ստեղծում՝ լաւագոյն արդիւնք ստանալու եւ լաւագոյն աշխատանքներ իրականացնելու համար:

ՎԱՃԱՌՔ-ՏՕՆԱՀԱՆԴԷՍ ՆՈՐ ՋՈՒՂԱՅՈՒՄ

Կազմակերպութեամբ Նոր Ջուղայի Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան կենտրոնական վարչութեան, ուրբաթ՝ դեկտեմբերի 16-ին ժամը 10:00-ից 22:00-ը միութեան հանդիսութիւնների դահլիճում տեղի ունեցաւ ամանորեայ վաճառք, որին մասնակցել էին Նոր Ջուղայի Հայուհեաց բարեգործական ընկերութիւնը, Հայ ուս. Զհարմահալ միութեան Նոր Ջուղայի մասնաճիւղը եւ Հայոց ազգ. «Արմէն» տարրական երկսեռ համալիրի աշակերտական խորհուրդն ու այլ անհատ մասնակիցներ: Վաճառքի կազմակերպման գործում համագործակցել էին Երէցների, Մշակութային եւ Սկաւտական միաւորները:

Ամանորեայ ամենամեայ վաճառքը առիթ է ընձեռում համայնքի անդամներին՝ ունենալու յատկապէս Նոր տարեայ թեմաներով ձեռարուեստի եւ շուկայական զարդերի ու սպասքների վաճառք:

ԳՆԱՀԱՏԱՆՔԻ ԵՐԵԿՈՅ՝ «ԿՈՒՆԿ» ԱՍՄՈՒՆՔԻ ԽՄԲԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐ ՌԻՄԱ ՍԻՄՈՆԵԱՆԻ ԵՒ ԿԱՐԻՆ ՏԷՐ-ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆԻ ՊԱՏԻՒՆ

Նոր Ջուղայի Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան կենտրոնական վարչութիւնը նպատակ ունենալով գնահատելու եւ արժեւորելու համայնքի մշակութային աշխատանքներում նշանակալի աւանդ ունեցող «Կուունկ» ասմունքի խմբի պատասխանատու տկն. Ռիմա Սիմոնեանի եւ վերջին տարիներում «Կուունկ» համոյթի ձեռ-

նարկների գեղարուեստական ղեկավարութեանը մասնակից Կարին Տէր-Մարտիրոսեանի գործունէութիւնը, շաբաթ՝ նոյեմբերի 26-ի երեկոյեան կազմակերպել էր գնահատանքի երեկոյ: Միջոցառմանը հրաւիրուած եւ ներկայ էին Միութեան աղջկանց բաժնի արտօնատէր՝ Այլին Մելիքեանը, Մշակութային միաւորի վարչակազմը, Երէցների, Մարզական եւ Ուսանողական միաւորների վարչութիւնների, Սկաուտական միաւորի Գերագոյն մարմնի, Կարգապահական ու լողարանի պատասխանատու կազմերի եւ Ֆուտբոլի յանձնախմբի ներկայացուցիչները:

Կենտրոնական վարչութեան անունից ողջոյնի խօսքով հանդէս եկաւ Մանիա Ղուկասեանը, ապա խօսքը փոխանցեց կենտրոնական վարչութեան նախագահ՝ Մասիս Մինասեանին, ով բարձր գնահատելով համայնքում իրականացուող մշակութային աշխատանքները, ընդգծեց «Կռունկ» համոյթի աշխատանքների իւրայատկութիւնն ու բարձր որակը, եւ սփիւռքեան դժուարին պայմաններում սոյն աշխատանքների նշանակալի դերը՝ սերունդներ դաստիարակելու ուղղութեամբ: Այնուհետեւ յուշանուէր յանձնելու նպատակով հրաւիրեց Ռիմա Սիմոնեանին եւ Կարին Տէր-Մարտիրոսեանին, որոնց պատուին էր կազմակերպուել այդ երեկոն, ինչը անակնկալի բերեց երեկոյի յատուկ հիւրերին, եւ ովքեր յուզումնալից տրամադրութեամբ՝ իրենց խորազգաց շնորհակալութիւնները յայտնեցին երեկոյի կազմակերպիչներին եւ ներկաներին:

Ռիմա Սիմոնեանն իր արտայայտութեան մէջ նշեց, որ Նոր Զուղայի եւ միութենական կեանքի հանդէպ սէրը եղել է այն խթանիչ ուժը, որով նա կարողացել է իր լուման ներդնել միութենական աշխատանքներում, նշելով, որ այդ ամբողջը համարում է պարտականութիւնն ու պարտաւորութիւնը համայքի նկատմամբ: Նա իր արտայայտութեան աւարտին հպարտութեամբ յայտնեց, որ իր աշակերտներն իր կողքին են եւ աշխատում են որպէս գործընկերներ՝ թէ միութենական աշխատանքներում եւ թէ կրթա-դաստիարակչական բնագաւառում: «*Մենք բախտաւոր ենք, որ ունենք միմեանց*»,- եզրակացրեց Ռիմա Սիմոնեանը:

Կարին Տէր Մարտիրոսեանն եւս շնորհակալական խօսքերի կողքին, իր ուրախութիւնը յայտնեց, որ պատկանում է միութեան մեծ ընտանիքին: Նա բարձր գնահատելով իր ուսուցչուհի եւ գործընկեր՝ Ռիմա Սիմոնեանի մեծ վաստակը, նշեց. «*Շուրջ 20 տարիներ աշակերտում եւ աշխատում եմ տկն. Ռիմայի հետ եւ ամէն վայրկեան նոր բան ունեմ քաղելու այս մրգառատ ծառից, այս մեծութիւնից*»:

Երեկոյի ընթացքում միաւորների եւ բաժանմունքների ներկայացուցիչները շնորհաւորանքների եւ շնորհակալական խօսքերի կողքին, անդրադարձան նրանց աշխատանքի բարձր որակին, մարդկային առանձնայատուկ տեսակին եւ կիսեցին իրենց տպաւորութիւններն ու նրանց հետ աշխատելու ընթացքում ունեցած գեղեցիկ եւ ուսուցողական յուշերը, նաեւ իրենց ուրախութիւնը յայտնեցին, որ իրենց զաւակները դպրոցում եւ միութեան յարկի ներքոյ վստահելի ձեռքերում են:

Երեկոն եզրափակուեց խմբական լուսանկարուելով:

ԳԵՐՊ. Տ. ՍԻՓԱՆ Ծ. ՎՐԴ. ՔԷՉԷՃԵԱՆԻ ԱՅՑԸ Ն.Զ. ՀԱՅ ԿԱՆԱՆՑ ԳԹՈՒԹԵԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄՈՒՀԻՆԵՐԻՆ

Սպահանի հայոց թեմի կաթողիկոսական փոխանորդ գերպ. Տ. Սիփան Ծ. վրդ. Քէչէճեանը ազգային հաստատութիւններին տուած իր այցելութիւնների շարանում, այս անգամ հիւրընկալուեց Նոր Զուղայի Հայ կանանց գթութեան միութեան յարկի ներքոյ, հինգշաբթի՝ դեկտեմբերի 8-ի առաւօտեան, Սպահանի հայոց թեմի Կրօնական խորհրդի ատենապետ պրն. Վարուժ Մովսիսեանի ընկերակցութեամբ:

Գերպ. Հայր Սուրբին ջերմ դիմաւորեցին միութեան անդամուհիները, ապա բարի գալստեան խօսքով հանդէս եկաւ պատկան վարչութեան նախագահուհի Արմինէ Սիմոնեանը, ով անդրադարձ ունեցաւ

101-ամեայ այս հաստատութեան հիմնադրման նպատակներին ու գործունէութեանը՝ ընդգծելով յատկապէս իրականացուած հայրենասիրական ու բարեսիրական աշխատանքները: Նա իր խօսքի շարունակութեան մէջ տեղեկացնելով, որ իր աւարտին է հասել միութեան 100-ամեակին նուիրուած գրքի նիւթերի խմբագրման աշխատանքը, յայտարարեց՝ սոյն գիրքը շուտով յանձնուելու է տպագրութեան:

Գերպ. Հայր Սուրբն իր խօսքում գնահատելով միութեան աշխատանքները՝ դրուատանքի խօսք ուղղեց նաեւ անդամուհիներին՝ հայրենասիրական ու բարեսիրական աշխատանքներում իրենց լուման ներդնելու եւ միութեան նախաձեռնութիւնները ջանասիրաբար իրականացնելու համար: Թեմի կաթողիկոսական փոխանորդը յոյս յայտնեց՝ ինչքան շուտ լոյս տեսնի միութեան 100-ամեակին նուիրուած գիրքը:

Հանդիպումը շարունակուեց մտերմիկ զրոյցի ներքոյ եւ նշուած հաստատութեան ապագայ ծրագրերի շուրջ բացատրութիւններով, ապա տկն. Սիմոնեանը միութեան 100-ամեակի առթիւ պատրաստուած յուշանուէրից եւ «Հայկական ժողովրդական տարազներ» գրքից նուիրեց գերպ. Հայր Սուրբին: Նոյն գրքից նուիրեց նաեւ թեմի Կրօնական խորհրդին:

ՀԱՅ ՈՒՍ. «ՉՀԱՐՄԱՀԱԼ» ՄԻՈՒԹԵԱՆ Ն.Ջ. ՄԱՍՆԱՃԻՒՂԻ ԵՒ ՀԱՅՈՒՀԵԱՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ «ԻՐԱՆԱԿԱՆ ԽՈՀԱՆՈՑԸ ԵՒ ԶԲՕՍԱՇՐՋՈՒԹԵԱՆ ՄՇԱԿՈՅԹԸ» ՓԱՌԱՏՕՆՈՒՄ

«Իրանական խոհանոցը եւ զբօսաշրջութեան մշակոյթը» խորագրով աւանդական ուտեստների եւ ըմպելիքների փառատօների շարանը կազմակերպւում է Իրանի Մշակութային ժառանգութեան, ձեռարուեստի եւ զբօսաշրջութեան կազմակերպութեան նախաձեռնութեամբ՝ նպատակ ունենալով վերականգնելու աւանդական ուտեստների պատրաստման սովորութիւնն ու զարգացնելու զբօսաշրջութեան արհեստը:

Միջոցառման կանոնների համաձայն երկրի բոլոր նահանգները բաժանուած են ութ շրջանների, որոնցում առանձնաբար իրականացւում է տեղական մակարդակով փառատօն: Տեղական միջոցառումների արդիւնքում լաւագոյններին արտօնւում է մասնակցելու երկրի մասշտաբով կազմակերպուելիք ընդհանուր ծրագրին:

Սոյն փառատօների շրջագծում ոչ միայն ներկայացւում եւ վաճառքի են հանւում աւանդական ճաշատեսակները, թխուածքներն ու ըմպելիքները, այլեւ կազմակերպիչների յատուկ դասաւորութեամբ կայանում են ուսուցողական աշխատանոցներ եւ գիտական խորհրդաժողովներ:

Ըստ նահանգների բաժանման ձեւաչափի՝ Սպահան, Թեհրան, Ալբորզ, Ղոմ եւ Մառքազի նահանգները ընդգրկւած են 6-րդ շրջանում, որի փառատօնը կայացաւ Սպահան քաղաքի «Զեհելսոթուն» պալատթանգարանի շրջափակում, դեկտեմբերի 1-3-ը: Մինչեւ օրս իրականացւել են վեց շրջանների միջոցառումները եւ 7-րդ ու 8-րդ շրջաններինը կը կայանան մինչեւ իրանական ընթացիկ տարւայ աւարտը:

Սպահանում կայացած փառատօնին մասնակցութիւն էին ցուցաբերել նաեւ Նոր Ջուղայի Հայուհեաց Բարեգործական ընկերութիւնն ու Հայ Ուս. «Հարմահալ» միութեան Նոր Ջուղայի մասնաճիւղը՝ նպատակ ունենալով պարսիկ հայրենակիցներին, ինչու չէ նաեւ արտասահմանցի զբօսաշրջիկներին ծանօթացնելու

հայկական աւանդական խոհանոցն ու մշակոյթը: Փառատօնին անձնական նախաձեռնութեամբ մասնակցել էին նաեւ երկու հայ ձեռներեցներ:

Զոյգ միութիւնների կրպակում ցուցադրուած թխուածքների, կարկանդակների, չրեղէնի եւ ճաշատեսակների շարքում յատկապէս ուշադրութիւն գրաւեցին հայկական՝ եօխան, գաթան ու տոլման: Իսկ որպէս կրպակի յարդարանք Բարեգործական ընկերութեան միջոցով տեղադրուել էր ամանորեայ տօնածառ, որը նոյնպէս արժանացաւ այցելուների ուշադրութեանն ու գնահատանքին:

Կազմակերպիչների հրաւէրով Սպահանի հայոց թեմի կաթողիկոսական փոխանորդ գերպ. Տ. Սիփան Ծ. վրդ. Քէչէճեանը Պատգամաւորական ժողովի դիւանի ատենապետ Վարուժ Մինասեանի եւ Թեմական խորհրդի ատենապետ Վրէժ Տէր-Մարտիրոսեանի ընկերակցութեամբ դեկտեմբերի 3-ի կէսօրից յետոյ, այցելեց սոյն ցուցահանդէս, որը մօտիկից ականատեսը լինելով միութիւնների իրականացրած աշխատանքին՝ գնահատեց նրանց կատարածը՝ հայկական մշակոյթի եւ խոհանոցի ճանաչեցման ուղղութեամբ:

Հարկ է նշել, որ միութիւնների մասնակցութիւնն ապահովել եւ այդ ուղղութեամբ հարկ եղած համադրութիւնները կատարել էր զբօսաշրջութեան ոլորտում մարկետինգի եւ պրոպականդի մասնագէտ Զոյեա Խաչատրեանը, ով Սպահան նահանգի Մշակութային ժառանգութեան, ձեռարուեստի եւ զբօսաշրջութեան գերատեսչութեան գլխաւոր տնօրէնի հրամանագրով նշանակուել էր որպէս տեղակա փառատօնի ծրագրման եւ մարկետինգի պատասխանատու:

ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ ՇԱՀԻՆՇԱՀՐՈՒՄ՝ ՆԻՒՐՒԱԾ ՀԱՅ ԿԱՆԱՆՑ ԵԿԵՂԵՑԱՍԻՐԱՑ ՄԻՈՒԹԵԱՆ ՀԱՆԳՈՒՅՑԵԱԼ ԱՆԴԱՄՈՒՀԻՆԵՐԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Շաբաթ՝ 2016 թւականի նոյեմբերի 26-ի երեկոյեան ժամը 5:00-ին, Շահինշահրի «Սրբոց Վարդանանց» եկեղեցու սրահում, նախագահութեամբ Շահինշահրի հոգեւոր տեսուչ Տ. Անանիա Ծ. Վրդ. Գուճանեանի եւ ներկայութեամբ Տ. Սահակ քհնյ. Մինասեանի ու դպրաց դասի կազմակերպել էր հոգեհանգստեան արարողութիւն՝ նուիրուած Շահինշահրի Հայ կանանց եկեղեցասիրաց միութեան հանգուցեալ անդամների յիշատակին՝ Շահինշահրի Հայ կանանց եկեղեցասիրաց միութեան հիմնադրման 40-ամեակի տօնակատարութեան յանձնախմբի նախաձեռնութեամբ:

Յոբելեար միութիւնն իր հիմնադրման 40-ամեակի առիթով իր պարտքն էր համարել յարգանքի եւ երախտագիտութեան տուրք մատուցել՝ յիշելով միութիւ-

նից առյաւէտ բաժանուած հիմնադիրներին, որոնց յիշատակին կազմակերպել էր հոգեհանգստեան արարողութիւն:

Օրուայ խորհրդին հաւատացեալներից բացի հրաւիրուած էին միութեան հանգուցեալ անդամուհիների ընտանիքի անդամները եւ հարազատները:

Գերպ. Հայր Սուրբն արարողութեան ընթացքում բարձր գնահատեց սոյն միութեան դերը եւ նշանակութիւնը համայնքի ազգային եւ եկեղեցական կեանքում: Նա օրհնութեամբ յիշեց Միութեան հիմնադիր անդամուհիների բարի յիշատակը, ովքեր որեւէ ճիգ ու ջանք չէին խնայել իրենց առաքելութիւնը լաւագոյնս կատարելու ուղղութեամբ եւ նրանց համբերատարութեան եւ նուիրուածութեան շնորհիւ կարողացաւ յարատեւել միութիւնը, այն աճեց ու բարգաւաճեց եւ ահա 4 տասնամեակ անց՝ պարզ ճակատով դիմաւորում է իր հիմնադրման 40-ամեակը:

Գերպ. Հայր Սուրբն իր գնահատանքի խօսքն ուղղեց նաեւ միութեան ներկայ եւ գործունեայ անդամներին, ովքեր բուռն յանձնառութեամբ եւ վեհ գիտակցութեամբ շարունակում են երախտաւոր անդամուհիների ուղին եւ նուիրական գործունէութիւնը՝ ծառայելով համայնքին եւ ընդհանրապէս հայորդիներին:

Վերջում տեղի ունեցաւ համեստ հիւրասիրութիւն:

ՅՈԲԵԼԵՆԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ՝ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՇԱՀԻՆՇԱՀՐԻ ՀԱՅ ԿԱՆԱՆՑ ԵԿԵՂԵՑԱՍԻՐԱՑ ՄԻՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 40-ԱՄԵԱԿԻՆ

Շահինշահրի Հայ կանանց եկեղեցասիրաց միութեան հիմնադրման 40-ամեակի յոբելենական ձեռնարկը տեղի ունեցաւ հինգշաբթի՝ 2016 թ. դեկտեմբերի 1-ի երեկոյեան ժամը 8:00-ին, Ն.Զ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան սրահում:

Ծրագրին ներկայ էին Սպահանի հայոց թեմի կաթողիկոսական փոխանորդ գերպ. Տ. Սիփան Ծ. վրդ. Քէչէճեանը, Շահինշահրի հոգեւոր տեսուչ Տ. Անանիա Ծ. վրդ. Գուճանեանը, Իրանի իսլամական խորհրդարանի Սպահանի եւ հարաւային իրանահայութեան պատգամաւոր՝ պրն. Ժորժիկ Աբրահամեանը, քահանայից դասը, ազգային մարմինների, միութիւնների, հայոց ազգային դպրոցների ներկայացուցիչներ, միութեան անդամուհիները եւ բազում հայորդիներ:

Ողջոյնի եւ բարիգալստեան խօսքով հանդէս եկաւ միութեան նախագահ տկն. Լինա Մովսիսեանը, ով ամփոփ ակնարկ նետեց միութեան 40-ամեայ գործունէութեանը: Ապա յանձնախմբի խօսքը փոխանցող տկն. Վիոլետ Յարութիւնեանի միջոցով ընթերցուեց Շահինշահրի հոգեւոր տեսուչ Տ. Անանիա Ծ. վրդ. Գուճանեանի՝ յոբելեար միութեանը ձօնուած գեղեցիկ բանաստեղծութիւնը, որն արժանացաւ ներկաների բուռն ծափողջոյնների: Յանձնախմբի խօսքում ընդգծուեց. «*Ազգային եւ կրօնական ոգով հզօրացած այս միութիւնը որպէս անվեհեր գինուոր դարձաւ համայնքում ստեղծագործող մարմին, օժանդակող անձնակազմ, իր նիւթա-բարոյական լման ներդնելով մինչեւ իսկ համազգային միջոցառումներին եւ ձեռնարկներին։ Շահինշահրի*

Հայ կանանց եկեղեցասիրաց միութիւնը ճառագայթող ներկայութիւնն է մեր համայնքի»։

Այնուհետեւ օրհնեալ հանդիսավարուհի տկն. Անահիտ Օհանեանը բեմ հրաւիրեց գերպ. Տ. Սիփան Ծ. վրդ. Քէչէճեանին, որի միջոցով ընթերցուեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Վեհափառի օրհնութեան գիրը՝ միութեան 40-ամեակի յոբելեանի առնչութեամբ:

Յաջորդիւ ցուցադրուեց վերոյիշեալ միութեան 40-ամեայ գործունէութիւնը պարունակող ֆիլմը:

Երեկոն յագեցած էր նաեւ գեղարուեստական ելոյթներով: Իրենց անզուգական կատարումներով հանդէս եկան Ս. Ամենափրկիչ Վանքի «Կոմիտաս» եւ «Տաթեւ» երգչախմբերը՝ ղեկավարութեամբ Արմէն Ամիրխանեանի եւ Համիկ Ալէքսանդրեանի: Իր հնչեղ ելոյթով հանդիսատեսի գնահատանքին արժանացաւ նաեւ Շահինշահրի «Նարօտ» մանկա-պատանեկան երգչախումբը՝ ղեկավարութեամբ Տ. Անանիա Ծ. վրդ. Գուճանեանի:

Պարուսոյցներ՝ օրդ. Նունէ Մկրտչեանի եւ տկն. Ալինա Գրիգորեանի ղեկավարութեամբ իրենց գեղեցիկ պարերով ներկայացան Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան մշակութային միաւորի «Կռունկ» եւ Փերիոյ կրթասիրաց միութեան «Էրեբունի» պարային համոյթները: Գեղարուեստական կատարումների շարանում ասմունքեցին տկն. Քարմէն Եարիջանեանը եւ բրշն. Սեւադա սրկ. Իսաղուլեանը:

Գեղարուեստական ծրագրի աւարտին օրհնեալ հանդիսավարուհին կազմակերպիչ յանձնախմբի անունից շնորհակալութիւն յայտնեց Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան Կենտրոնական վարչութեանը՝ սրահը տրամադրելու համար եւ բոլոր այն անձանց, ովքեր համագործակցել էին հանդէսը պատշաճօրէն իրագործելու ուղղութեամբ:

Որպէս եզրափակիչ խօսք իր օրհնանքը փոխանցեց Տ. Սիփան Ծ. վրդ. Քէչէճեանը, ով բարձր գնահատեց միութեան 40-ամեայ գործունէութիւնը՝ շեշտելով միութեան անդամուհիների ցուցաբերած բուռն սէրն ու նուիրուածութիւնը, յանձնառութիւնը, համբերատարութիւնը՝ ստանձնած պարտականութիւնների եւ ազգային-կրօնական աշխատանքների իրագործման կապակցութեամբ:

Այնուհետեւ զոյգ կղերականների, Թեմական ու Կրօնական խորհուրդների եւ Շահինշահիր Հայ համայնքի վարչութեան ատենապետերի ներկայութեամբ՝ հատուց 40-ամեակի առիթով պատրաստուած խորհրդանշական կարկանդակը՝ անդամուհիներ Լինա Մովսիսեանի եւ Անահիտ Օհանեանի միջոցով:

Ներկաներին բաժանուեցին միութեան հիմնադրման 40-ամեակի գործունէութեան տեղեկագիրը, իսկ հրաւիրեալներին՝ նաեւ 40-ամեակը խորհրդանշող լոգոկրծքանշանը: Վերջում տեղի ունեցաւ պատշաճ հիւրասիրութիւն:

ԱՄԱՆՈՐԵԱՅ ՅՈՒՅԱՀԱՆԴԷՍ-ՎԱՃԱՌՔ ՇԱՀԻՆՇԱՀՐՈՒՄ

Շահինշահիր Հայ կանանց եկեղեցասիրաց միութիւնը 2016 թւականի դեկտեմբերի 8-9-ին կազմակերպել էր տօնական ցուցահանդէս-վաճառք՝ համայնքի «Սրբոց Վարդանանց» դպրոցի սրահում: Սոյն ձեռնարկի բացման արարողութեանը ներկայ էին համայնքի հոգեւոր տեսուչ՝ գերպ. Տ. Անանիա Ծ. վրդ. Գուճանեանը եւ արժն. Տ. Սահակ քհնյ. Մինասեանը, միութեան անդամուհիները եւ բազմաթիւ այցելուներ:

Հանդիսաւոր բացումը կատարուեց գերպ. Հայր Սուրբի ձեռամբ, ով ողջոյնի եւ օրհնութեան խօսք փոխանցելով ներկաներին՝ բարձր գնահատեց կազմակերպիչ Միութեան ամենամեայ այս ձեռնարկը:

Ինչպէս ամէն տարի, գեղեցկօրէն դասաւորուած վաճառասեղանների վրայ շարուած էին բազմագոյն ու բազմատեսակ առարկաներ՝ տօնական խաղալիքներ, ձեռագործ շարֆեր, գլխարկներ, հագուստեղէններ եւ նաեւ ախորժալի բազմազան ուտելիքներ՝ գաթաներ, թխուածքներ, քաղցրաւենիքներ, մրգեր ու թթուներ:

Բարիգալստեան գեղեցիկ խօսքով, Միութեան նախագահուհի տկն. Լինա Մովսիսեանն իր շնորհակալական խօսքն ուղղելով գերպ. Հայր Սուրբին իր ցուցաբերած հովանաւորութեան համար, նախօրօք շնորհաւորեց գալիք տարին եւ յոյս յայտնեց, որ 2017 թւականը բոլորին պարգեւի նորանոր յաջողութիւններ: Տկն. Մովսիսեանը շնորհակալութիւն յայտնեց նաեւ Շահինշահիր Հայ Համայնքի Վարչութեանը սրահը այս միջոցառմանը տրամադրելու համար:

Այնուհետեւ գերպ. Հայր Սուրբը շնորհաւորելով բոլորին Ամանորեայ եւ Ս. Ծննդեան տօների կապակցութեամբ՝ աղօթեց Բարձրեալին, որ բոլորի ընտանեկան օջախը ողողի ջերմ սիրով, գուրգուրանքով, համբերութեամբ եւ նուիրուածութեամբ: Նա ողջունելով Միութեան անդամների ջանասիրութիւնը եւ յանձնառութիւնը՝ մաղթեց նրանց առաւել ոյժ, եռանդ ու կորով:

ՇՐՋԱԳԱՅՈՒԹԻՒՆ ԴԷՊԻ ՓԵՐԻՈՅ ԳԱՒԱՌԻ ՂԱՐՂՈՒՆ ԳԻՒՂԻ «Ս. ՆՇԱՆ» ԵԿԵՂԵՑԻ

Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան Շահինշահիրի մասնաճիւղի վարչութեան հովանաւորութեամբ եւ Երէցական միաւորի նախաձեռնութեամբ կազմակերպուել էր շրջագայութիւն դէպի Փերիոյ գաւառի Ղարղուն գիւղի «Ս. Նշան» եկեղեցի: Նախապէս համադրելով եկեղեցու վարչութեան հետ եւ զբօսաշրջիկների համար ապահովելով սենեակներ, հինգշաբթի՝ 2016 թւականի նոյեմբերի 3-ի առաւօտեան ժամը 6:00-ին, 22 հոգանոց խումբը ճանապարհուեց դէպի Փերիոյ գաւառ՝ շատերի համար հարազատ մի վայր, միւսների համար ծանօթութիւն հայկական մշակոյթի ժառանգութեան նմուշներից մէկի հետ: Թիրան քաղաքի յարմարաւէտ եւ գեղեցիկ այգում նախաճաշելուց եւ մի փոքր հանգստանալուց յետոյ, խումբը շարունակեց ճանապարհը եւ

ժամը 10:30-ին հանրակառքը կանգ առաւ Ղարղուն գիւղի «Ս. Նշան» եկեղեցու դռան մօտ:

Հարկ է նշել, որ եկեղեցին կառուցել է 1903 թւականին եւ յայտնի է, որ 1069 թւականի ձեռագիր, մագաղաթեայ «Ղարղունի Աւետարանը» 1969 թւականին տեղափոխուել է Հայաստան եւ այժմ պահւում է «Մեսրոպ Մաշտոցի» անուան մատենադարանում: Եկեղեցուն կից նախկինում գործել է հայկական ազգային դպրոց, որի դասասենեակները վերանորոգուել եւ դպրոցի բակը եկեղեցու բակի հետ միացուել է միջանցքով:

Շրջագայողները տեղաւորուելով նախկին դասասենեակներից մէկում, շտապեցին եկեղեցի՝ սրտաբուխ աղօթելու եւ փառաբանելու Աստծուն: Առաջին անգամ Ղարղուն այցելած զբօսաշրջիկների ուշադրութիւնը գրաւեց գիւղի «Ս. Նշան» եկեղեցու գեղեցիկ տեսքը եւ ներքին յարդարումը:

Այնուհետեւ բաժանուելով խմբերի՝ մի մասն այցելեց գիւղի հայկական գերեզմանատուն՝ խունկ ծխելու իրենց նախնիների շիրիմներին, իսկ միւս մասը՝ շրջեց գիւղում, մտովի պատկերացնելով իրենց նախնիների ոչ շատ հեռու անցեալում ապրած կեանքի դրւագները:

Հետաքրքիր եւ հաճելի օր անցկացնելով, զբօսաշրջիկները բարձր տրամադրութեամբ եւ անմոռանալի յուշերով, երեկոյեան ժամը 9:30-ին վերադարձան Շահինշահր եւ շնորհակալութիւն յայտնելով կազմակերպիչներին հրաժեշտ տուեցին միմեանց:

ՇԱՀԻՆՇԱՀՐԱԲՆԱԿ ՀԱՅ ՄԱՐԶԻԿՆԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐԱԾ ՆԻԱՃՈՒՄՆԵՐԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Շաբաթ՝ թւականիս նոյեմբերի 26-ի երեկոյեան ժամը 7:30-ին, Շահինշահրի Հայ համայնքի վարչութեան հրաւէրով՝ նշեալ վարչութեան գրասենեակ ներկայացան շնորհալի մարզիկներ եւ միաժամանակ եղբայրներ Մասիս եւ Մանուկ Թորոսեանները, ովքեր թւականիս նոյեմբերի 5-ին Հայաստանի Ազգային պոլիտեխնիկական համալսարանի 2-րդ մասնաշէնքի դահլիճում կազմակերպած Բադիբիլդինգի ազգային ֆեդերացիայի ֆիթնես բիկինի, մենզ ֆիզիկ, բադիբիլդինգ եւ կլասիկ բադիբիլդինգ ոլորտներում ակնառու նուաճումներ էին արձանագրել:

Սոյն հանդիպմանը ներկայ էին Հայ համայնքի վարչութեան անդամները եւ համայնքի հոգեւոր տեսուչ Տ. Անանիա Ծ. վրդ. Գուճանեանը:

Մանուկ Թորոսեանը կլասիկ ֆիզիկի մէջ առաջին, մենզ (Men's) ֆիզիկի մէջ երկրորդ, իսկ Մայիս Թորոսեանը բադիբիլդինգի մէջ երկրորդ տեղն էին գրաւել:

Յատկանշելի է, որ այս երկու յաջողակ եղբայրները երկար տարիներ է, ինչ Շահինշահրում ղեկավարում են «Նամջու» մարմնամարզութեան սրահը, որտեղ ներգրաւել են մեծ թւով անդամներ: Նրանք իրենց մարզախմբերով թէ՛ շրջանի եւ թէ՛ Սպահանի մրցունակ խմբերից են, որոնք բազմիցս փայլել են մազահարթակներում եւ արձանագրել առաջնութիւններ եւ մարզական արժանիքների շնորհիւ վայելում են Իրանի Սպահան նահանգի մարմնամարզութեան ֆեդերացիայի եւ ընդհանրապէս պետական շրջանակների յարգանքն ու ուշադրութիւնը:

Երկու եղբայրները մեծ խանդավառութեամբ յայտնեցին իրենց տպաւորութիւնները Հայաստանի Հանրապետութեան Ազգային ֆեդերացիայի եւ պատասխանատուների կողմից ցուցաբերած ջերմ վերաբերմունքի մասին: Նրանք ամփոփ կերպով ներկայացրին ֆեդերացիայի նախաձեռնութեամբ իրենց հետ վարած հարցազրոյցը, որի ընթացքում

առաջարկութիւն էին ստացել Հայաստանի Հանրապետութիւնում հաստատուելու տարբերակը. ընդունելու դէպքում նրանց կը տրամադրուէր մարզական հնարաւորութիւններ՝ իրենց մասնագիտութեամբ զբաղուելու ուղղութեամբ:

Գերպ. Հայր Սուրբը եւ Հայ Համայնքի Վարչութիւնը համակ ուշադրութեամբ ունկնդրեցին շնորհալի ախոյեանների արտայայտութիւնները, բարձր գնահատեցին նրանց դրսեւորած փայլուն ձեռքբերումները եւ առաջարկեցին նաեւ իրենց հովանաւորութիւնը հարկ եղած դէպքում:

Տեղի ունեցաւ համեստ հիւրասիրութիւն, որից յետոյ Հայ Համայնքի Վարչութեան կողմից շնորհալի մարզիկ եղբայրները պարգեւատրուեցին ոսկեդրամով:

Թորոսեան եղբայրների յաղթանակի լուրին արձագանգեցին նաեւ համայնքի հայոց ազգային «Նարեկ» մանկապարտէզ-նախակրթարանի սաները, ովքեր գեղեցիկ նկարչութիւններ նուիրելով նրանց՝ յայտնեցին իրենց սէրն ու ուրախութիւնը այս կապակցութեամբ: Ախոյեանները ի պատասխան սաների դրսեւորած անկեղծ սիրուն եւ միաժամանակ իրենց շնորհակալութիւնը յայտնելու համար՝ քաղցրաւենիքներով այցելեցին կրթօջախ՝ հանդիպելու դպրոցի անձնակազմին ու սաներին:

ԱՄԱՆՈՐԵԱՅ ՆԱԽԱՏՕՆԱԿ ՇԱՀԻՆՇԱՀՐԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ «ՆԱՐԵԿ» ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶ-ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆՈՒՄ

Երեքշաբթի՝ թւականիս դեկտեմբերի 20-ի առաւօտեան ժամը 9-ից մինչեւ 11:30-ը, Շահինշահրի հայոց ազգային «Նարեկ» մանկապարտէզ-նախակրթարանի յարկի տակ տօնական էր: Առիթը բոլորի կողմից միշտ սիրուած գեղեցիկ եւ մօտալուտ Նոր տարին էր: Դպրոցի տեսչութեան, ուսուցչական կազմի եւ ծնողական խորհրդի նախաձեռնութեամբ կազմակերպուած այս գեղեցիկ նախատօնակին՝ դպրոցի սաները գեղեցիկ տեսքով ներկայանալով՝ կատարեցին Ամանորին նուիրուած խանդավառ երգեր ու պարային շարժումներ:

Խրախճանքի ընթացքում յայտնուեցին բոլոր մանուկների սիրելի ձմեռ պապն ու ձիւնանուշը, ովքեր ջերմ ու հարազատ մթնոլորտում սաներին նուիրեցին գեղեցիկ մրգեր:

Օրուայ առիթով ներկաները վայելեցին նաեւ նախապատրաստուած համեղ տօնական տորթը:

ՀԱՆԴԻՊՈՒՄ Ն.Ջ. ՀԱՅ Մ.Մ. «ԱՐԱՐԱՏ» ՄԻՈՒԹԵԱՆ ՇԱՀԻՆՇԱՀՐԻ ՄԱՍՆԱՃԻՒՂՈՒՄ

Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան Շահինշահրի մասնաճիւղի վարչութեան հովանաւորութեամբ եւ Մարզական միաւորի նախաձեռնութեամբ, թւականիս դեկտեմբերի 25-ի ժամը 19:00-ին, «Ս. Վարդանանց եւ Մասիս» դպրոցների երկրորդ յարկի սրահում, կազմակերպուել էր հանդիպում մարզիկներ Մայիս եւ Մանուկ Թորոսեանների հետ, ովքեր 2016 թւականի նոյեմբերի 5-ին մասնակցելով Հայաստանում անցկացուած «Բադիբիլդինգ»-ի ազգային ֆեդերացիայի «ֆիթնես-բիկինի» մրցութիւններին՝ ձեռք էին բերել ակնառու յաջողութիւններ: Մանուկ Թորոսեանը «Կլասիկ-ֆիզիկ»-ի ոլորտում գրաւել է առաջին եւ «Մենզ-ֆիզիկ»-ի մէջ երկրորդ տեղերը: Իսկ Մայիս Թորոսեանը «բադիբիլդինգ»-ի ոլորտում գրաւել է երկրորդ տեղը:

Երեկոյին ներկայ էին Շահինշահրի հոգեւոր տեսուչ գերպ. Տ. Անանիա Ծ. վրդ. Գուճանեանը, մասնաճիւղի

մարզիկ-ուհիները եւ հայ համայնքի անդամները:

Հանդիպման սկզբում մասնաճիւղի վարչութեան նախագահ Գեւիկ Խաչատրեանը ողջունեց եւ շնորհակալութիւն յայտնեց ներկաներին՝ իրենց ներկայութեան եւ յատկապէս Թորոսեանների ընտանիքին՝ հրաւէրն ընդունելու համար, ապա շնորհաւորեց յաղթանակած մարզիկներին արձանագրած յաջողութեան առիթով՝ ցանկանալով նորանոր մրցանակներ: Գեւիկ Խաչատրեանը նշեց. «*Հանդիպման նպատակն է հայ համայնքում ներկայացնել եւ գնահատել Շահինշահրի շնորհալի մարզիկների յաջողութիւնը եւ քաջալերել երիտասարդներին*»: Ապա խօսքը փոխանցեց Մարիա Խուդավերդեանին, ով ընթերցելով շնորհալի մարզիկների կենսագրութիւնը, նշեց. «*Թորոսեան եղբայրները Շահինշահրում ղեկավարում են «Նամջու» մարմնամարզութեան սրահը, որը ճանաչուած է արձանագրած յաջողութիւններով եւ վայելում է Իրանի Սպահան նահանգի Մարմնամարզութեան Ֆեդերացիայի ուշադրութիւնը եւ պետական մարմինների սէրն ու յարգանքը: Եղբայրները մասնակցել են տարբեր մրցութիւնների եւ արձանագրել բազմաթիւ նուաճումներ*»: Յատկանշական է, որ Մայիս Թորոսեանը 2015 թւականից ազգային հաւաքականի անդամ է եւ մինչեւ այժմ ստացել է 25-ից աւելի մեդալներ:

Այնուհետեւ Մայիս եւ Մանուկ Թորոսեանները համառօտ ներկայացրին Բադիբիլդինգը՝ որպէս բազմաթիւ մարզաձեւերի հիմք եւ նշեցին առաւելութիւնները, առկայ դժուարութիւններն ու խնդիրները, ներկաների հետ կիսուեցին իրենց տպաւորութիւններով՝ Հայաստանում անցկացուած խաղերի ընթացքի մասին: Թորոսեան եղբայրները սիրով եւ բովանդակալից կերպով պատասխանեցին ներկաներին յուզող բոլոր հարցերին, ինչպէս նաեւ տալով մասնագիտական խորհուրդներ մարմնամարզութեամբ զբաղուողներին:

Շնորհաւորանքի խօսքերով հանդէս եկաւ Շահինշահրի հոգեւոր տեսուչ գերպ. Տ. Անանիա Ծ. վրդ. Գուճանեանը, ով նախ խրախուսեց մասնաճիւղի վարչութեանը՝ նմանօրինակ հանդիպում կազմակերպելու համար, ապա շնորհաւորեց ու գնահատեց մարզիկներին իրենց կատարած աշխատանքի եւ Շահինշահրի հայ համայնքի անունը բարձր պահելու համար եւ նշեց. «***Սիրով, կամքի ուժով եւ նպատակասլաց աշխատանքի միջոցով է միայն կարելի հասնել այսպիսի բարձր արդիւնքների***»:

Մասնաճիւղի վարչութիւնը յաղթանակած մարզիկներին յանձնեց գնահատագրեր, փոքրիկ յուշանուէրներ եւ Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան Շահինշահրի մասնաճիւղի անդամակցութեան քարտեր:

Հանդիպումն անցաւ ջերմ մթնոլորտում: Ներկաների ուշադրութիւնը գրաւել էր սրահում ցուցափեղկերի վրայ նախապէս փակցուած լուսանկարները, որոնցում ներկայացուած էին մարզիկներ՝ Մայիս եւ Մանուկ Թորոսեանների մարզական առօրեան, ստացած մեդալները եւ մրցանակները: Վերջում լուսանկարուեցին եւ Միութեանս Երէցական միաւորի օգնութեամբ կատարուեց համեստ հիւրասիրութիւն:

ԱՄԱՆՈՐԵԱՅ ՀԱՆԴԷՍ ՇԱՀԻՆՇԱՀՐԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ «ՆԱՐԵԿ» ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶ-ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆՈՒՄ

Երեքշաբթի՝ 2016 թւականի դեկտեմբերի 27-ի երեկոյեան ժամը 7:00–ին, Շահինշահրի «Նարեկ» մանկապարտէզ-նախակրթարանի տեսչութեան, ուսուցչական կազմի եւ ծնողական խորհրդի նախաձեռնութեամբ կազմակերպուել էր Ամանորեայ հանդէս: Սոյն ձեռնարկին ներկայ էին Սպահանի հայոց Թեմի Կաթողիկոսական փոխանորդ Տ. Սիփան Ծ. Վրդ. Քէչէճեանը, համայնքի հոգեւոր տեսուչ Տ. Անանիա Ծ. վրդ. Գուճանեանը, թեմիս Թեմական եւ Կրթական խորհուրդների եւ համայնքի Վարչութեան ներկայացուցիչներն ու սաների ծնողները:

Բարիգալստեան խօսքով հանդէս եկաւ դպրոցի տեսչուհի օրդ. Կարինէ Մինասքանեանը, ով շնորհաւորելով Ամանորը բոլորին մաղթեց ուրախ, բարեբեր եւ յաջողութիւններով լի տարի: Այնուհետեւ իր

շնորհակալական խօսքն ուղղեց ազգային մարմիններին եւ ծնողներին, ովքեր իրենց անվերապահ աջակցութեամբ միշտ սատարել են դպրոցին եւ իրենց հնարաւորութիւնների սահմանում ծաղկուն ու կանգուն պահել այն:

Յաջորդիւ տօնական զարդարուած բեմի վրայ՝ իրենց վառ ու գունեղ զգեստներով ներկայացան կրթօջախի սաները, ովքեր աշխոյժ ու ոգեւորիչ երգ ու պարով եւ քաղցրահունչ ասմունքներով հաճելի պահեր պարգեւեցին ներկաներին:

Իսկ ինչպէս ամենամեայ Ամանորեայ հանդէս փոքրիկներին հիւր եկան նրանց սիրելի ու այդքան սպասուած ձմեռ պապն ու ձիւնանուշը՝ հրաշք մանուկներին նուիրելով գեղեցիկ մրգեր: Սաների ուրախութիւնը բազմապատկուեց, երբ նրանց հետ պար բռնեցին ձմեռ պապն ու ձիւնանուշը՝ մթնոլորտին հաղորդելով առաւել խանդավառութիւն ու հարազատութիւն:

Հանդէսի աւարտին բեմ հրաւիրուեց Տ. Սիփան Ծ. վրդ. Քէչէճեանը իր հայրական մաղթանքը արտայայտելու, ով դրուատեց մանուկների ելոյթը, բարձր գնահատեց դպրոցի տեսչութեան, ուսուցչական կազմի եւ ծնողական խորհրդի կատարած առաքելութիւնը՝ հայ մանկանը կրթելու եւ հայեցի դաստիարակելու նուիրական գործում: Այնուհետեւ Ամանորի եւ Ս. Ծննդեան բարեբաստիկ տօների կապակցութեամբ իր շնորհաւորանքի խօսքն ուղղեց բոլորին եւ նրանց մաղթեց քաջառողջութիւն, արեւշատութիւն եւ նորանոր վերելքներ՝ անձնական, ընտանեկան եւ ազգային կեանքում:

Վերջում դպրոցի տեսչուհին շնորհակալութիւն յայտնեց բոլոր ներկաներին՝ իրենց ներկայութեան համար եւ նաեւ բոլոր այն անձնաւորութիւններին, ովքեր համագործակցել էին ծրագրի իրականացման աշխատանքում:

Ծրագրի աւարտին բոլոր ներկաների համար նախատեսուել էր համեստ հիւրասիրութիւն:

ՍՊԱՀԱՆ ՆԱՀԱՆԳԻ ՄԱՐՄՆԱՄԱՐԶՈՒԹԵԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ ԵՆԹԱԿԱՅ ՀԱՅ ՉԵՄՊԻՈՆՆԵՐԸ ԳՆԱՀԱՏԻԵՑԻՆ ՍՈՅՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ

Սպահան նահանգի մարմնամարզութեան (բոդիբիլդինգ) յանձնաժողովի նախագահ Հոսէյն Եաւմոհամադեանը եւ նրան ընկերակցող պատուիրակութիւնը, Ամանորի եւ Ս. Ծննդեան տօների առթիւ, աննախադէպ այցելութիւն կատարելով հայի տնօրինութեամբ աշխատող «Մասիս» մարմնամարզութեան ակումբ, գնահատեցին սոյն յանձնաժողովին ենթակայ, Իրանի եւ միջազգային մակարդակներով իրականացուած առաջնութիւնների եօթ հայ չեմպիոններին ու նրանց մարզիչներին: Պատուիրակութեանը մաս էին կազմել յանձնաժողովի մի շարք պատասխանատուներ ու մարմնամարզութեան ոլորտի տարիների չեմպիոններ:

Հանդիպման ընթացքում հնչեցին շնորհաւորանքի խօսքեր ու բարեմաղթանքներ, ապա յանձնաժողովի նախագահի կողմից գնահատագրերի արժանացան մարմնամարզիկներ՝ Նոէլ Նորուիկ Օհանեանը, Մայիս Թորոսեանը, Մանուկ Թորոսեանը եւ Էդուիկ Մարկոսեանը, բազկամարտիկ Օշին Տէր-Գրիգորեանը, կրծքի փրեսով զբաղող Սերօ Շահիջանեանն ու ծանրամարտիկ Սերգէյ Փանոսեանը: Գնահատեցին նաեւ մարզիչներ՝ Շահռամ Ֆոռուղին եւ Մաջիդ Դուսթին:

Նշելի է նաեւ, որ ի երախտագիտութիւն տրուած աննախադէպ այցելութեան, «Մասիս» մարմնամարզութեան ակումբի անունից սոյն կենտրոնի տնօրէն Նոէլ Նորուիկ Օհանեանը շնորհակալագրեր յանձնեց պրն. Եաւմոհամադեանին եւ նրան ընկերակցող պատուիրակութեան անդամներին:

2016 ԹԻԱԿԱՆԻ ՅԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ՝ ԿՐՕՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՄՕՏ ՊԱՀ ԴՐԻԱԾ ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻՑ

Ա) Սէթ եւ Ծողեր Եապեանեներ հիմնադրամ

Ն.Զ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութիւն ..... 6,300,000 ռ.
Կրթական Խորհուրդ..... 6,300,000 ռ.
Կրօնական Խորհուրդ ..... 4,200,000 ռ.
Հայ Դատի քարոզչական աշխատանքներին..... 4,200,000 ռ.

Բ) Վահան, Ալահիտ եւ Հերոս Վարդեւանեաններ

Կրօնական Խորհուրդ ..... 13,000,000 ռ.
Կրթական Խորհուրդ (կրօնական-հայեցի դաստիարակութեան)..... 13,000,000 ռ.

Գ) Գառնիկ Բալիլ հիմնադրամ

Բարեսիրական Մարմին..... 6,000,000 ռ.

Դ) Կոշկակար Մատթէոս հիմնադրամ

Հայ Դատի քարոզչական աշխատանքներին..... 14,000,000 ռ.

Ե) Չարլզ Էդգար հիմնադրամ

Բարեսիրական Մարմին..... 56,000,000 ռ.

Զ) Ժենիկ Ալեսոիքեան (Ալբթէքեան) հիմնադրամ

Բարեսիրական Մարմին..... 40,500,000 ռ.
Կրթական Խորհրդին..... 40,500,000 ռ.

Է) Սոֆիա Մաշուրեան հիմնադրամ

Բարեսիրական Մարմին..... 35,000,000 ռ.
Կրօնական Խորհուրդ ..... 35,000,000 ռ.
Հայ Դատի քարոզչական աշխատանքներին..... 35,000,000 ռ.

Ը) Գալուստ, Մուրատ, Նարդ եւ Լուսիկ հիմնադրամ *(Լեւոն Մինասեանի կողմից)*

Բարեսիրական Մարմին..... 6,665,000 ռ.
Կրթական Խորհուրդ..... 6.665,000ռ.
Կրթական Խորհուրդ (Համալսարանականների կրթական նպաստի ֆոնդին)..... 6,665,000 ռ.
Ն.Զ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութիւն ..... 6,665,000 ռ.
Հայ Դատի քարոզչական աշխատանքներին..... 6,665,000 ռ.
Եկեղեցիների, դպրոցների, ազգային եւ մշակութեային կենտրոնների նորոգութեան համար ..... 6,665,000 ռ.

Թ) Բարդուղ եւ Երանուհի Բարդուղեաններ հիմնադրամ

Բարեսիրական Մարմին..... 14,000,000 ռ.
Կրթական Խորհուրդ..... 14,000,000 ռ.
Կրօնական Խորհուրդ ..... 14,000,000 ռ.
Հայ Դատի քարոզչական աշխատանքներին..... 14,000,000 ռ.

Ժ) Զաւէն Յովհաննիսեան հիմնադրամ

Բարեսիրական Մարմին..... 15,000,000 ռ.

ԺԱ) Սահակ Աղասեան հիմնադրամ

«Ծանր Հիւանդներ»-ի Հիմնադրամ..... 4,500,000 ռ.

ԺԲ) Յովհաննէս (Զուռիկ) Յովհաննէս–Փուռ հիմնադրամ

«Ծանր Հիւանդներ»-ի Հիմնադրամ..... 15,000,000 ռ.

ՅԻՇԱՏԱԿՆ ԱՐԴԱՐՈՅ ՕՐՀՆՈՒԹԵԱՄԲ ԵՂԻՑԻ:

ՆԻՒԹԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Ն.Ջ. Հայոց Առաքելական Եկեղեցեայ Վարչութիւն

- 10,000,000 դրամ. Մարալ Խաչիկեան՝ Նազիկ Մանուկեանի յիշատակին
- 2,000,000 դրամ. Վարդան եւ Կարինէ Մկրտչեաններ

Ս. Գէորգ եկեղեցի

- 1,000,000-ական դրամ. Ալբերտ եւ Դիանա Իսրայէլեաններ, Մինաս Գէորգեան, Սաջադ Էթեմադի, Ղայեդի, Քոլի
- 500,000-ական դրամ. Սիրան Ալումեան, Գայիանէ Գէորգեան, Ալիա
- 300,000-ական դրամ. Գեւիկ եւ Անդրիա Խաչատրեաններ, Սոհէյլա Էշղի
- 100,000 դրամ. Վաչէ Շահիջանեան

Խաչի զոյգելու համար

- 500,000-ական դրամ. Ռոզա Ղարիբեան, Զորինէ Մարտիրոսեան
- 400,000 դրամ. Յովիկ Թորոսեան
- 300,000 դրամ. Քաթրին Քամարզարեան
- 200,000-ական դրամ. Անէթ Նաւասարդեան, Այլին Այւազեան, Գիլդա Կիրակոսեան
- 150,000 դրամ. Իւեթ Թահմազեան, ոմն (2 պարագայ)
- 100,000 դրամ. Խաչատրեան, Ռիմա Թորոսեան, Արգին Յովսէփեան, Առլեն Թորոսեան, ոմն

Ս. Յովհաննու եկեղեցի

- 1,000,000 դրամ. Դիանա Փուլադեան՝ Ծաղկուշ Յարութիւնեանի դիազարդի փոխան

Ս. Աստուածածին եկեղեցի

- 500,000 դրամ. ոմն՝ փոխան դիազարդի

Հանգուցեալ Անուշ Քեշիշեան- Յովսէփեանի յիշատակին

- 500,000-ական դրամ. Հայկ եւ Սիրանուշ Յովսէփեաններ, Ալեքս եւ Կարինէ Յովսէփեաններ
- 400,000 դրամ. Յարութ եւ Սիրան Բաղդասարեաններ
- 300,000 դրամ. Վազրիկ Մարկոսեան
- 200,000-ական դրամ. Քլար Խաշաքեան, Աւուկ եւ Սանդրա Խուդաբախշեաններ, Յովսէփ Աւետեան, Սուլթան Թորոսեան
- 150,000-ական դրամ. Գաբրիէլ Թորոսեան, Սեդա Քեշիշեան, Գառնիկ Թորոսեան
- 100,000 դրամ. Աննիկ Քեշիշեան
- 50,000 դրամ. Բալաս Ղարիբեան

Հանգուցեալ Մանուկ Խաչատրեանի յիշատակին

- 500,000-ական դրամ. Տ. Կոմիտաս քհնյ. Թորոսեան, Հայդուկ Մարգարեան, Արաքս եւ Ռազմիկ Մկրտչեաններ
- 400,000 դրամ. Մարտիկ Դիասեան
- 300,000 դրամ. Վերժիկ Թորոսեան
- 200,000-ական դրամ. Գրիշ եւ Ֆլոր Թորոսեաններ, Սաթիկ Թորոսեան, Հերոս եւ Արմինէ Քալանթար-Օհանեաններ, Խաթունիկ Բաբումեան, Սարո Ղարախանեան, Հիլդա Ղարախանեան
- 100,000 դրամ. Օլգա Ղարախանեան

Հանգուցեալ Սոֆիա Դիլանչեանի յիշատակին

- 500,000-ական դրամ. Աբդալ Յովսէփեան, Վարդուշ Դիլանչեան
- 200,000-ական դրամ. Վարուժ եւ Սթելա Վարդանեաններ, Անդրանիկ Ասատրեան, Բագրատ Սիմոնեան, Ռազմիկ եւ Աստղիկ Դիլանչեաններ
- 150,000-ական դրամ. Մասիս Դիլանչեան, Հրաչ Մուրադեան, Ռիմա Դիլանչեան, Արշալոյս Թահմազեան
- 100,000-ական դրամ. Բալաս Ղարիբեան, Մարո Թորոսեան

Հանգուցեալ Սարգիս Փիլոսեանի յիշատակին

- 500,000-ական դրամ. Ռոլանդ եւ Ժանեթ Ղարախանեաններ, Դիմիթրի Յովհաննիսեան
- 300,000-ական դրամ. Տիգրանուհի Ղեւեան, Սեդա Այւազեան, Արմոնդ եւ Սոնիա Փանոսեաններ
- 250,000 դրամ. Արաքս Աբեղեան
- 200,000 դրամ. Ալֆրեդ Ղարախանեան
- 150,000 դրամ. Յարութ եւ Սիրան Բաղդասարեաններ

Հանգուցեալ Ղազար Մկրտչեանի յիշատակին

- 1,000,000 դրամ. Վարդան եւ Կարինէ Մկրտչեաններ
- 500,000-ական դրամ. Արթին Դաւթեան, Լեւոն Մկրտչեան
- 100,000 դրամ. Մասիս եւ Վարդուհի Մկրտչեաններ

Հանգուցեալ Վիգէն Մարկոսեանի յիշատակին

- 2,000,000 դրամ. Վազրիկ Մարկոսեան
- 500,000-ական դրամ. Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու կանանց յանձնախումբ, Յակոբ Մարկոսեան, Վահիկ Մարկոսեան, Ռեմոնդ Մարկոսեան, Նորիկ եւ Սոնա Յարութիւնեաններ, Դիանա Ղարախանեան, հանգուցեալի կնոջ ընկերուհիներ
- 400,000-ական դրամ. Սիլվարդ եւ Անուշ Թորոսեաններ, Սարդար Ղազարեան
- 300,000-ական դրամ. Եզնիկ Մարկոսեան, Խորէն եւ Աստղիկ Մինասքանեաններ, Հրաչ Իսաղուլեան, Միսակ Թահմազեան, Վանիկ Մարկոսեան, Մելքոմ եւ Լուսիկ Քեշիշեաններ
- 250,000-ական դրամ. Ռազմիկ Մարկոսեան, Մասիս եւ Աիդա Մինասքանեաններ, Ժիրայր եւ Մելինա Ղարիբեաններ
- 200,000-ական դրամ. Կանանց հոգեւոր լսարան եւ «Շուշանիկ» երգչախումբ, Շողիկ Մարկոսեան, Ստեփան Մինասեան, Արսէն Շահբազեան, Ղուկաս եւ Հրաչիկ Ղարիբեաններ, Տիգրան Քեշիշեան, Վարուժ եւ Սթելա Վարդանեաններ, Ալբերտ Սահակեան, Համօ եւ Արաքս Հայրապետեաններ
- 150,000-ական դրամ. Եզնիկ Ղարիբեան, Մասիս Դիլանչեան, Աստղիկ Մարկոսեան, Հայկազ Պետրոսեան, Անդրէ Ղազարեան
- 100,000-ական դրամ. Սամուէլ Ասատրեան, Մալուս Յովսէփեան, Կարօ Գալստեան, Բալաս Ղարիբեան, Երուանդ Խաչիկեան, Ծաղկուշ Աբելեան

Հանգուցեալ Աննա Զոհրաբեան-Յակոբեանի յիշատակին

- 1,200,000 դրամ. Հայոց ազգային «Արմէն» կրթահամալիրի տեսչութիւն եւ Ծնողական խորհուրդ
- 200,000 դրամ. Յասմիկ Դաւթեան
- 100,000 դրամ. Յովիկ Թորոսեան

Հանգուցեալ Վարուժ Այւազեանի յիշատակին

- 200,000 դրամ. Մարիամ եւ Մարգարիտ Զարգարեաններ
- 100,000-ական դրամ. Գուրգէն Թահմազեան, Մասիս Միրզախանեան

Հանգուցեալ Մարտիրոս (Մալուս) Յովսէփեանի յիշատակին

- 1,000,000 դրամ. Կարօ Յովսէփեան
- 800,000 դրամ. Վրէժ եւ Սիլւա Յովսէփեաններ
- 500,000-ական դրամ. Աբդալ Յովսէփեան, Մասիս եւ Վանուհի Ղազարեաններ, Օֆիկ Ոսկանեան, Էլիզա Յովսէփեան
- 300,000-ական դրամ. Ն.Ջ. Հայուհեաց բարեգործական ընկերութիւն, Հայ ուս. Զհարմահալ միութեան Նոր Ջուղայի մասնաճիւղ, Հայկուշ Խաչիկեան, Սուսանբար Ղազարեան, Արբի եւ Մելինա Բաբումեաններ
- 200,000-ական դրամ. Կանանց հոգեւոր լսարան եւ «Շուշա-

նիկ» երգչախումբ, Տ. Վարդան քինյ. Աղաբաբայեան, Սիմիկ Ղարախանեան, Մասիս եւ Վարդուհի Մկրտչեաններ, Մարջան Մինասեան, Համօ եւ Ռիթա Մկրտչեաններ, Արսէն Ճահբազեան, Վանիկ եւ Մարօ Առաքելեաններ, Զաւէն եւ Հերիքնազ Խաչիկեաններ, Սաքօ եւ Ռիմա Տէր-Յովհաննիսեաններ, Սքարլետ Հայրապետեան, Սիլւա Պետրոսեան, Զանիկ Ղազարեան

- 150,000-ական ռիալ. Համազ Մարգարեան, Բագրատ Սիմոնեան, Գուրգէն Թահմազեան, Նւարդ Վարդանեան, Երուանդ Խաչիկեան, Մինաս Թահմազեան, Աննիկ Քեշիշեան
- 100,000-ական ռիալ. Վարդանուշ Յովսէփեան, Վահիկ Այւազեան, Փայլակ Յակոբեան

Հանգուցեալ Մատթէոս Պարսամեանի յիշատակին

- 1,300,000 ռիալ. Մասիս եւ Ժուաննա եւ Սերլի Պարսամեաններ
- 200,000-ական ռիալ. Գուրգէն Թահմազեան, Անիթա Մինասեան
- 150,000-ական ռիալ. Եզնիկ Ղարիբեան, Գալստան Փանոսեան
- 100,000 ռիալ. Սամուէլ Ասատրեան

Հանգուցեալ Պետրոս Ղազարեանի յիշատակին

- 500,000 ռիալ. Հելէն Հայրապետեան
- 300,000 ռիալ. Սուսանբար Ղազարեան
- 200,000-ական ռիալ. Արթին Դաւթեան, Մարթա Դարաբիդեան
- 150,000 ռիալ. Անուշ Թահմազեան
- 100,000 ռիալ. Մասիս Քեշիշեան

Հանգուցեալ Գեղամ Համբարձումեանի յիշատակին

- 1,000,000 ռիալ. Ֆրեդ Մկրտչեան
- 200,000 ռիալ. Համօ եւ Ռիթա Մկրտչեաններ
- 100,000-ական ռիալ. Ծովինար Իսախանեան, Մասիս Դիլանչեան

Հանգուցեալ Լորիկ Խաչատրեան-Ղուկասեանի յիշատակին

- 5,000,000 ռիալ. Մկրտիչ Աւետումեան
- 300,000 ռիալ. Արմոնդ Ալեքսանդրեան
- 150,000 ռիալ. Սերոժ Խանլարեան

Հանգուցեալ Սալբիկ Բաղրամեանի յիշատակին

- 300,000 ռիալ. Ռազմիկ եւ Արփի Թորոսեաններ
- 200,000-ական ռիալ. Աննիկ Քեշիշեան, Սիլվարդ Թորոսեան
- 100,000 ռիալ. Մարգար Մինասքանեան

Հանգուցեալ Թադէոս Խուդավերդեանի յիշատակին

- 600,000 ռիալ. Քլար Խաշաքեան
- 500,000-ական ռիալ. Սարդար Ղազարեան, Արարատ Մելիքեան
- 300,000-ական ռիալ. Յակոբ Մարկոսեան, Դադանեան ընտանիք
- 150,000 ռիալ. Ասլան Սարեան

Ն.Զ. Հայոց ազգային «Քանանեան» եւ «Կաստարինեան» դպրոցներ

Գրքի ամենամեայ ցուցահանդէս-վաճառք

- 2,000,000 ռիալ. Ն.Զ. Հայ Կանանց Գթութեան միութիւն
- 1,000,000-ական ռիալ. Երանուշ Թահմազեան
- 500,000-ական ռիալ. Փերիոյ կրթասիրաց միութիւն, Հայ ուս. Զհարմահալ միութեան Ն.Զ. մասնաճիւղ, Լորետա Մինասեան, Արաքս Տէր-Մարտիրոսեան
- 300,000 ռիալ. Արսինէ Անդրիասեան

Սպահանի Հայոց Թեմի Կրթական Խորհուրդ

- 4,500,000 ռիալ. ոմն՝ մէկ աշակերտի կրթաթոշակի դիմաց

Ն.Զ. Հայ Կանանց Գթութեան Միութիւն (Կարմիր Խաչ)

- 5,000,000 ռիալ. Սոնիկ Ասատրեան Մանուշ Ասատրեանի յիշատակին
- 1,500,000 ռիալ. Բալաս Թահմազեան
- 1,000,000 ռիալ. Վարուժ Մինասեան
- 500,000 ռիալ. Անժէլ Քոչարեան՝ Լուսիկ Մարտոեան-Ոսկանեանի մահուան յիշատակին փոխան ծաղկէփսակի
- Սնունդ եւ սննդամթերք. Արա Մկրտչեան, Ֆառհադի
- Քաղցրաւելնիք. Վոլգա Իւնիկեան, Սաթենիկ Թորոսեան
- Խմորեղէն. Սոնիկ Միրզաբեգեան, Հայրապետ Խոդադեան, Սերոժ Ոսկանեան, Մագի Յարութիւնեան, Մառիկ Յակոբեան, ոմն
- Սուրճի հիւրասիրութիւն. Փերինազ Օհանեան
- Մրգեղէն. Երան Խոդավերդեան
- Բժշկական ներքնակ. Վարուժ եւ Վալերիկ Թորոսեաններ՝ Մանուկ Խաչատրեանի յիշատակին

Ստուգում նախորդ համարից

- 5,000,000 ռիալ. Վարսենիկ Օրոջեան
- 2,200,000 ռիալ Հ.Մ.Ա.Կ.-ի Թիւ 1 սկաուտական

Առաջնորդարանին եւ ազգային կառոյցին առընչուող լուրերն ու թղթակցութիւնները պատրաստում է Ազգային Առաջնորդարանի Հանրային կապի գրասենեակը, համայնքային եւ կրօնական արարողութիւններինը՝ «Այիք»-ի թղթակիցները, «Արարատ» Միութեանը՝ Երանուշ Թահմազեանը, Շահինշահրի հայ համայնքինը եւ տեղի «Արարատ» Միութեան մասնաճիւղինը՝ Վիոլէթ Յարութիւնեանը եւ Աիդա Մուրադեանը։

Որոշ լուսանկարներ տրամադրում է Գեւիկ Խաչատրեանը։

ՄԵՐ ՀԱՍՑԷՆ

خلیفه گری ارامنه اصفهان و جنوب ایران

صندوق پستی ۸۱۷۳۵/۱۱۵

Armenian Cathedral - P.O.Box 81735-115

New - Julfa, Isfahan, Iran

WWW.Norjugha.ir

WWW.Vank.ir

E-mail: Sourbv@Yahoo.com

Tel: +98–31–36243471-2

Fax: +98–31–36270999